

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդեն երկար տասնամյակներ Հայոց ցեղասպանության փաստի եւ դրա միջազգային ճանաչման դեմ Թուրքիան պայքարում է ոչ միայն քաղաքական, այլեւ գիտական ոլորտում: Յարկ է շեշտել, որ թուրքական պաշտոնական պատմագրություն կոչվածը, ըստ էության, նույնական է պատմության խնդարյուրմանը, հատկապես, երբ խնդիրը վերաբերում է Հայոց ցեղասպանությանը կամ Հայկական հարցին: Պատմությունը նորովի եւ իրենց հարմար ձեւով կերտելու, այսինքն՝ կեղծելու հանձնարարականը թուրքական պատմագրությանը տրվել էր Թուրքիայի Հանրապետության հիմնադրի՝ Քեմալ Աթաթուրքի կողմից, եւ այդ հարցը գտնվում էր նրա անմիջական վերահսկողության ներքո: Հայության դեմ թուրքական պատմագիտական հարձակումը հատկապես ակտիվանում է 1965 թվականից հետո, եւ այդ գործընթացը շարունակվում է մինչ օրս: Ներկայում եւս Հայոց ցեղասպանության հարցը թուրքական պատմագրության թիվ մեկ խնդիրն է, որի ուղղությամբ այն իրականացնում է համակարգված քաղաքականություն:

Այս ամենի համատեքստում բավական հետաքրքիր են պետական թեզից տարբերվող տեսակետ ունեցող թուրք պատմաբանների հոդվածներն ու հարցագրույցները: 2005 թվականից եւ հատկապես հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո սկսված քննարկումների ժամանակ առավել օբյեկտիվ մոտեցում ունեցող որոշ թուրք պատմաբաններ, վերլուծաբաններ սկսեցին հոդվածներ տպագրել ու հարցագրույցներ տալ Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ, որոնցում, երենն, կարելի է հանդիպել ուշագրավ բացահայտումների եւ խոստովանությունների: Նկատենք նաեւ, որ հիշյալ նյութերը հիմնականում տեղ են գտել համեմատաբար ավելի ազատ թուրքական մամուլում: Ստորեւ բարգմանաբար ներկայացնում ենք մի քանի թուրք գիտնականների արտահայտած կարծիքները Հայոց ցեղասպանության մասին, որոնք վկայում են թուրքական գիտական շրջանակների փոքր հատվածում տեղի ունեցող զարգացումների մասին:

Ռ.Ս.

**Թաներ Աքչամ (պատմաբան)** – Երիտրուրքերի իշխանության օրոք արտաքին գործերի նախարարի եւ ազգային ժողովի նախագահի պաշտոնը զբաղեցրած Հալիլ Մենթեշը Մալթայում գրած մի նամակում նշում է, որ եթե Երկրից հայերին եւ հույներին չքշեին, ապա իրենք այս պետությունը չէին կարողանալու հիմնել: Նման խոսքեր շատ ավելի պարզ ձեւով ասել է 1920թ. Անկարայի ազգային ժողովում Հասան Ֆեհմին: «Նախքան աքսորն իրականացնելը գիտեհնք, որ մեզ մարդասպան կոչչեին», – ասում է եւ հարցնում. «Ինչո՞ւ մենք գնացինք մարդասպան կոչվելու ռիսկին»: Հարցնում է եւ ինքն էլ պատասխան տալիս. «Մենք դա ստիպված էինք ամել մեր պաշտելի հայրենիքի բարօրության համար»:

Թուրքիայի Հանրապետությունը ստեղծվեց նաեւ 1915-ի Հայոց ցեղասպանության արդյունքում: Թուրքիայի Հանրապետությունը հիմնած գործիչների փառքը մեր ազգային ինքնության անքակտելի մասն է: Նրանց քննադատելը կամ մեղադրելը կարծես նման լինի ինքնամեղադրանքի, եւ սա շատ դժվար է: Բայց Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների մեջ կան մարդիկ, ովքեր մասնակից են եղել 1915թ. ցեղասպանությանը կամ տեղյակ են եղել դրա մասին, եւ ազատ խոսելու մեր դժվարությունը նաեւ այստեղից է բխում:

Ըստ 1919-ի օսմանյան պաշտոնական թվերի՝ 800 հազար հայ է ոչնչացվել: Եթշտ է ասելը՝ 800 հազար հայ է կոտորվել, եւ պարզ է, որ պետությունը պատասխանատու է այսքան մարդու սպանության համար: Եկեք այս պատասխանը դիտարկենք ավելի մանրամասն. ասենք թե 800 հազար մարդ մահացավ «քաղցից, անբարենպաստ պայմաններից, անհասկանալի պատճառներից» եւ այլն: Լավ, բայց նույն 1916, 1917, 1918 թվականներին օսմանյան կառավարությունը 1,5 միլիոնից ավելի մուսուլմանների տեղահանությունը կատարեց առանց որեւէ խնդրի: Այդ ինչպես պետությունը, որ 1,5 միլիոն մուսուլմաններին առանց որեւէ խնդրի տեղահանեց, չկարողացավ խոչընդոտել մոտավորապես մեկ միլիոն հայերի կոտորածին:

Գիտեք՝ մենք պաշտոնական մի սուստ ունենք. ասում են, թե «հայերը մեզ թիկունքից հարվածելու էին, հարվածում էին, այդ պատճառով պատերազմական շրջաններից նրանց հանեցինք եւ առավել անվտանգ վայրեր տարանք, որպեսզի մեր դեմ չափատերազմեին»: Սակայն կարեւոր է նշել, որ հայերն Անատոլիայի բոլոր շրջաններից են աքսորվել՝ Անկարայից, Բուրսայից, Քյութահիայից, Ամասիայից, Թոքարից, Սամունից,

Եղիրնեից, Թեքիրդաղից: Նայեք, թե հայերին այս վիլայեթներից հանում եւ ո՞ւր են քշում՝ Սիրիայի եւ Իրաքի անապատներ: Ընդ որում, օսմանյան փաստաթղթերով Սիրիան եւ Իրաքը հայտարարվել էին որպես պատերազմական տարածք: Դայերին հանում են Անատոլիայի կենտրոնից՝ ամենաաճանագ վիլայեթներից, ուր որեւէ դեպք չի եղել, եւ ուղարկում ուղիղ պատերազմական շրջան՝ անգլիացիների հետ պատերազմի: Մի՞թե այստեղ տարօրինակ ոչինչ չկա...

«Եկեք այս հարցը թողնենք պատմաբաններին» նախադասությունը արդեն ձանձրացրել է: Թուրքիայի արտգործնախարարությունն ու մեր դիվանագետները, զգիտես ինչու, դարձել են աշխարհի ամենամեծ պատմաբանները: Եվ այս ամենից հետո ասում եք, թե այս հարցը թողնենք պատմաբաններին: Այսինքն՝ կրողնեք պատմաբաններին միայն այն ժամանակ, երբ նրանք կասեն այն, ինչ դուք եք ուզում: Եվ հակառակը՝ չեք թողնում խոսեն այն պատմաբանները, որոնք հայտնում են ձեր տեսակետից տարբերվող տեսակետներ: Սա ամբողջովին քաղաքական հարց է, եւ անհրաժեշտ է, որ երկու երկրների քաղաքական գործիչները նստեն ու լուծեն այս հարցը:

Թուրքիան չի կարող ապրել այս ոճրագործությունը ծածկելով: Սա Թուրքիայի ամորն է: Այս ամորով Թուրքիան չի կարող ոչ Եվրամիության անդամ դառնալ, ոչ էլ ժամանակակից աշխարհում տեղ ունենալ: Պարզապես թույլ չեն տա: Մենք այսօր այս հարյուրամյակն անվանում ենք ներողություն խնդրելու դար: Թուրքիան նման էր մի կաթսայի. Ագև-ն կափարիչն էր, որը դժվարությամբ էր «ծածկում» Թուրքիան: Այժմ այս կաթսան պայթում է. արդեն հնարավոր չէ Թուրքիային արտաքին աշխարհից մեկուսի պահել: Ամեն տեղից կաթսան ժայթքում է:

**Մելիմ Դերիմգիլ** (պատմաբան) – Ասում են. «1915-ի դեպքերը թող պատմաբանները լուծեն», սակայն արդյո՞ք պատմաբաններին հարցրել են: Ո՞չ, թուրքական իշխանություններն ունեն պատմաբաններ, որոնց ես կոչում եմ «Ա թիմ»: «Դարցը թողնենք պատմաբաններին» ասելով հենց նրանց նկատի ունեն:

Թուրքիայի Հանրապետության կերտողները հազարավոր մարդիկ չեն: Դրանք մի քանի հարյուրի հասնող մարդիկ էին, որոնք բոլորն էլ 1915թ. հայերի տեղահանության ժամանակ այս կամ այն պաշտոնն են զբաղեցրել: Նրանք կամ իմացել են դեպքերի մասին, կամ էլ անմիջականորեն մասնակցել են դրանց: Մեծ հաշվով նույն մարդիկ էին: Ասվում

է. «Տեղահանությունը, կոտորածը, ցեղասպանություն կամ ինչ էլ որ լինի, այն իրականացրել են երիտթուրքերը»: Շատ լավ, իսկ ովեր՝ են այդ երիտթուրքերը: Յանրապետության հիմնադիրները բոլորն էլ երիտթուրքեր էին:

**Դալիլ Բերքեր (պատմաբան)** – Թուրքիայի պետական եւ կիսապետական դիրքորոշման խնդիրը բավական դժվար է: 1915–1930 թվականներին կոտորածների մասին բոլորը գիտեին: Դրա համար էլ, երբ ուսումնասիրում ենք այդ ժամանակաշրջանի պատմագրությունը, երբեք չենք հանդիպում «այդպիսի բան չի եղել, դա սուտ է» արտահայտությանը: Պատճառն այն է, որ այս իրադարձությունները դեռեւս սերունդների հիշողությունների մեջ էին եւ բոլորն էլ գիտեին, թե ինչ է տեղի ունեցել: Կային նաև մարդիկ, ովքեր հպարտանում էին՝ ասելով. «Եթե մենք չսպանեինք, նրանք էին սպանելու»: 1926 թվականին *Los Angeles Examiner* թերթում տպագրվում է Աթարուրքի հետ մի հարցագրույց: Այդ ժամանակ արդեն ավարտվել էր երիտթուրքական կուսակցության որոշ անդամների դատավարությունը: Պատասխանելով լրագրողի հարցին՝ Մուսթաֆա Քեմալը ասում է. «Այն մարդիկ, ուն մենք այսօր դատապարտում ենք, նախկինում Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ սարսափելի բռնությունների եւ կոտորածների հեղինակներն են»:

**Այշե Ջյուր (վերլուծաբան-իրապարակախոս)** – 1914 թվականին հաստատված գրանցումների համաձայն՝ Օսմանյան կայսրությունում հայ համայնքին պատկանող 2538 եկեղեցի, 451 վանք եւ 2000 դպրոց կային: Աքսորից հետո հայկական գյուղերում եւ քաղաքներում բնակություն հաստատած մուսուլմանների առաջին գործը կենտրոնական ու գեղեցիկ եկեղեցիները մզկիթի վերածելն էր: Մնացածն էլ որպես պահեստ, կաթուայտուն է օգտագործվել: Խորհրդարանի ազգայնամոլ թեւի ներկայացուցիչ Ռզզա Նուրը 1921 թվականի մայիսի 25-ին Արեւելյան ռազմաճակատի հրամանատար Քազըն Քարաբեքիրին ուղարկած նամակում ասում էր. «Եթե հաջողվի Անի քաղաքի հետքերը երկրագնդից վերացնել, դա Թուրքիայի համար մեծ ծառայություն կլինի»: Խոսքը միջնադարում հայոց թագավորության մայրաքաղաքի մասին էր: Քարաբեքիրը իր հուշերում գրել էր, որ Ռզզա Նուրի առաջարկը մերժել է, որովհետեւ Անիի մնացորդները Ստամբուլի

պարհսպների չափ տարածք էին զբաղեցնում եւ դժվար էր այդ տեսակ աշխատանք իրականացնելը:

Երիտրուրբական կուսակցությունը 1915 թվականի աքսորն իրականացնելիս եւ լայն ժողովրդական զանգվածներին, եւ օսմանյան պետության քաղաքական, վարչական ու զինվորական կադրերի մեջ մասին հանցակից էր դարձրել: Այսինքն՝ կար կոլեկտիվ իրականացված հանցանք: Երիտրուրբերի գաղափարախոսությունը հասել է մինչեւ մեր օրերը: Ահա այս շարունակականության, որը կարող ենք կոչել հանցակցություն, պատճառով, չնայած ավելի քան 90 տարի է անցել, բայց հնարավորություն չի ստեղծվում բացահայտել 1915 թվականի հայերի աքսորի (որն էլ կարող եք ցեղասպանություն որակել) իրականությունը:

**Պատրաստեց Ռուբեն Մելքոնյանը**

## **ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ Հայկ Գաբրիելյան**

Դեռևս նախորդ տարվա աշնանը Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն իրեն աշխարհի 100 մտածողների թվում ընդգրկած ամերիկյան Foreign Policy պարբերականին տված հարցազրույցի ժամանակ նշել էր. «Երբ 2003 թվականին ես՝ որպես վարչապետ երդողանի գլխավոր խորհրդական, առաջ քաշեցի «զրո խնդիր հարեւանների հետ» սկզբունքը, շատերը դա տիպիկ ուտոպիա էին համարում: Սակայն վերջին տարիները հօդս ցնդեցրին այդ նտքերը: Այսօր դա իրականություն է. ոչ ոք ճգնաժամ չի ակնկալուն Թուրքիայի եւ նրա հարեւան երկրներից մեկնումեկի միջեւ»:

Սակայն այսօր Թուրքիան խնդիրներ ունի իր գրեթե բոլոր հարեւանների հետ, եւ ուշագրավն այն է, որ բոլոր դեպքերում էլ դրա նախաձեռնողի դերում հանդես է եկել հենց Թուրքիան, ինչը վկայում է նրա տարածաշրջանային եւ անգամ միջազգային մեծ հավակնությունների, ինչպես նաև կանխամտածված քայլերի մասին: Այս ամենն ամենեւին էլ զարմանալի չէ, եթե հիշում ենք Դավութօղլուի հետեւյալ հայտարարությունը. «Երբ մտածում ենք այն հոգեբանությամբ, թե շրջապատված ենք թշնամիներով, ապա, նախաձեռնությամբ հանդես գալու փոխարեն, առաջնորդվում ենք պաշտպանական ռեֆլեքսով: Երբ հասմենք մեր հարեւանների հետ զրո խնդիր մակարդակի, այդ ժամանակ արտաքին քաղաքականության վարման առումով վերին աստիճանի լայն մանեւրելու դաշտ կստանանք»: Այլ կերպ ասած՝ «զրո խնդիրին» հաջորդելու էր նեոսմանիզմը:

### **Իսրայել**

Վարչապետ Էրդողանի գլխավորությամբ Թուրքիան շարունակում է զարգացնել արաբական աշխարհի առաջնորդ դառնալու գործընթացը, ինչի համար պետք է անպայմանորեն վատթարացներ իսրայելի հետ իր հարաբերությունները՝ փոխարենը շահելով արաբական երկրների համակրանքը: Հենց դրան էր միտված նախորդ տարվա մայիսի 31-ին գրանցված «Ազատության նավատորմի» միջադեպը, երբ թուրքական

«Մավի Մարմարա» նավի վրա իսրայելցի հատուկօլկատայինները սպանեցին Թուրքիայի 9 քաղաքացիների: Երդողանը միջադեպի կապակցությամբ Իսրայելին անվանեց «ծովահեն»՝ ընդգծելով, որ դա իրեն օրինական հիմք էր տալիս այդ երկրին պատերազմ հայտարարելու համար, իսկ Դավութօղլուն դա որակեց որպես «թուրքական սեպատեմբերի 11»՝ միջազգային հանրության ուշադրությունը իրավիրելով այն բանի վրա, որ իր երկրի քաղաքացիները սպանվել են այլ երկրի կանոնավոր բանակի կողմից: Միջադեպից հետո թուրքական կողմն Իսրայելից շարունակ պահանջում է ներողություն խնդրել ու փոխհատուցում վճարել, ինչն էլ ավելի կրաքարացնի Թուրքիայի հեղինակությունն արաբական աշխարհի աշքում:

Սակայն Թուրքիայի ավելի քան մեկամյա հույսերը խորտակվեցին այս տարվա սեպտեմբերի սկզբին, երբ ՄԱԿ-ը իրապարակեց «Ազատության նավատորմի» միջադեպի վերաբերյալ իր 105 էջանոց գեկույցը, որով օրինական ճանաչվեց Գազայի հատվածի շրջափակումն Իսրայելի կողմից: Դրանով որոշակիորեն սասանվեց Թուրքիայի հեղինակությունը, սակայն նա հայտարարեց, որ Իսրայելի հետ հարաբերությունները դեռ կարող են կարգավորվել, եթե վերջինս ներողություն խնդրի, փոխհատուցում վճարի եւ վերացնի Գազայի շրջափակումը: Ի պատասխան՝ Իսրայելի փոխվարչապետ Մոշե Այալոնը հայտարարեց, որ եթե իրենք ներողություն խնդրեն, ապա դրանից հետո երդողանը կդառնա Կենտրոնական Արեւելքի առաջնորդը, եւ որ անգամ դրանից հետո հանգիստ չի թողնի Իսրայելին:

Դարձ է նշել, որ եթե նախկինում Թուրքիան աջակցում էր մոտ 7 միլիոն բնակչություն ունեցող Իսրայելին եւ իր դեմ լարում մոտ 350 միլիոն բնակչություն ունեցող ավելի քան 20 արաբական երկրների, ապա վերջին շրջանում Թուրքիան գիտակցել է, որ իր համար ավելի ձեռնտու է հակառակ տարբերակը: Դրա համար էլ երդողանը միայն վերջին շրջանում է հիշել, որ Իսրայելն ունի միջուկային ռումբ՝ ընդգծելով, որ Թուրքիան պատրաստ է Իսրայելի հետ պատերազմին: Դաշվի առնելով, որ Թուրքիան դեռևս չի հրաժարվել արաբական աշխարհում իր դիրքերն ամրապնդելու քաղաքականությունից, ապա կարելի է կարծել, որ առաջիկայում շարունակելու է Իսրայելի հետ հարաբերությունների վատթարացման գործընթացը՝ այդ ընթացքում շարունակ հանդես գալով հակախրայելական հնչեղ հայտարարություններով:

## Կիպրոս. Հունաստան

Իսրայելի դեմ պայքարին զուգահեռ, Թուրքիան սկսեց պայքարել նաեւ Միջերկրական ծովի արեւելյան հատվածում իր քաղաքական ու ռազմական ներկայության ամրապնդման ուղղությամբ։ Այն մեծ կարեւորություն է տալիս տվյալ շրջանին, որտեղ թուրքական նավատորմը խոշորներից մեկն է։ Դեռեւ 2010 թվականի գարնանը հայտնի դարձավ, որ Թուրքիան պլանավորել է Միջերկրական ծովում ստեղծել «թուրքական խաղաղապահ ուժեր», որոնց առաջադրանքը Միջերկրածովյան ավագանում՝ Զիբրալթարից մինչեւ Լիբանան, միջազգային ջրերում պարեկություն իրականացնելն է (ինչպես ԱՄՆ 6-րդ նավատորմը)։

Ներկայումս Թուրքիան առաջ է քաշել «Բարբարոսա» պլանը (անվանվել է 16-րդ դարի թուրք ծովակալ Յայրեդրին Բարբարոսայի պատվին), որով նախատեսվում է Սեւ եւ Մարմարա ծովերում տեղակայված մի շարք ռազմանավերի փոխադրումը դեպի Միջերկրական եւ Եգեյան ծովեր։ Սակայն Արեւելյան Միջերկրածովյուն իր ռազմական ներկայության ընդլայնման համար Թուրքիային պատրվակներ էին անհրաժեշտ, եւ Թուրքիան անմիջապես գտավ միանգամից երկուսը։

ա) Երբ Կիպրոսը մտադրություն հայտնեց իր եւ Իսրայելի բացառապես տնտեսական գոտում (ԲՏԳ) նավթի ու գազի որոնողական աշխատանքներ իրականացնելու մասին, Թուրքիան անմիջապես հայտարարեց, թե ԲՏԳ-ի սահմանների որոշման հարցը վերջնականապես հստակեցված չէ։ Թուրքիան հայտարարեց, որ չի ճանաչում Իսրայելի եւ Լիբանանի հետ Կիպրոսի կնքած համաձայնագրերը, որոնք առնչվում են ԲՏԳ-ի սահմանների հստակեցմանը։ Թուրքիան վստահեցնում էր, որ դրանով «խախտվում» են ինքնահոչակ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության (ՀԿԹՀ) իրավունքները։

Թուրքական կողմն Կիպրոսին անգամ սպառնաց Արեւելյան Միջերկրածովյուն նավթի ու գազի որոնողական աշխատանքներ սկսելու դեպքում ռազմական պատասխան տալ։ Սակայն երբ Կիպրոսն անտեսեց թուրքական սպառնալիքը եւ գնաց այդ քայլին, Թուրքիան, ռազմական պատասխանի փոխարեն, տվեց գազային պատասխան։ ՀԿԹՀ-ի հետ կնքեց գազային համաձայնագիր եւ սկսեց գազի որոնողական աշխատանքներ անցկացնել, ինչի համար քննադատության արժանացավ Հունաստանի կողմից (վերջինս սեպտեմբերի 4-ին երուսաղեմում ռազմական համագործակցության հուշագիր է ստորագրել Իսրայելի

հետ): Այս կապակցությամբ կիպրական մամուլը գրեց. «Թուրքիան հաջում է, սակայն չի կծում»:

թ) Երկրորդ պատրվակը վերաբերում է նույն «Ազատության նավատորմի» միջադեպին: Երդողանը հայտարարեց, որ Գազայի հատված մեկնող նավերին կուղեկցեն թուրքական ռազմանավերը, որոնք այսուհետ ավելի հաճախ նկատելի կլինեն Արեւելյան Միջերկրածովում: Իսկ Դավութօղլուն հայտարարեց, որ Թուրքիան այդ քայլին է գնում Արեւելյան Միջերկրածովում «ազատ նավարկության պաշտպանության համար»:

Այս ամենի արդյունքում թուրքական ռազմանավերն արդեն իսկ հայտնվել են Արեւելյան Միջերկրածովում եւ սկսել են խոչընդոտմեր հարուցել տվյալ հատվածով երթեւեկող իսրայելական առեւտրանավերին: Այսպիսով, այս ամենն ի ցույց է դնում, որ Արեւելյան Միջերկրածովում խնդիրը ոչ թե գազն ու նավքն է, այլ Թուրքիայի ռազմաքաղաքական դիրքերի ուժեղացումը, ինչը պլանավորված էր նախապես:

## Սիրիա

Սեպտեմբերի 19-ին Դավութօղլուն ամերիկյան The New York Times թերթին տված հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ Թուրքիան Սիրիայի կողմից դավաճանված ու խաբված է զգում, քանի որ Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադն իրենց շարունակ կեղծ խոստումներ է տվել՝ չիրագործելով 14 կետանոց «ճանապարհային քարտեզը»: Սեպտեմբերի 20-ին և յու Յորդում տեղի ունեցած Երդողան-Օբամա հանդիպման ժամանակ կողմերը պայմանավորվեցին Ասադի վրա քաղաքական ճնշումների մեծացման շուրջ: Արդեն հաջորդ օրն իսկ Երդողանի հրահանգով՝ Թուրքիան դեպի Սիրիա ռազմական բեռներ փոխադրող ինքնաթիշների համար փակեց իր օդային տարածքը: Ի պատասխան՝ Սիրիան արգելեց ամեն տիպի թուրքական ապրանքների ներկրումը:

Սեպտեմբերի 26-ին CNN հեռուստաալիքին տված հարցազրույցի ժամանակ Երդողանը հայտարարեց, որ Ասադի հանդեպ շատ համբերատար է գտնվել, սակայն նա արդեն լցրել է իր համբերության բաժակը: Ապա եգիպտական «Ալ-Ահրամ» թերթը գրեց, որ Ասադից Երդողանի հիասքափելու պատճառն ամենեւին էլ նրա կողմից ժողովողավարական բարեփոխումների խափանումը չէ. «Դումիսին Երդողանն Ասադին առաջարկել է Սիրիայում հակակառավարական ելույթների դադարեցման

հարցում իր աջակցությունը, եթե Ասադը սիրիական կառավարության մեջ 3-4 նախարարական պորտֆելներ հատկացնի Սիրիայում արգելված «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությանը: Սակայն Ասադը կտրուկ մերժել է երդողանի այդ առաջարկը՝ ընդգծելով, որ քաղաքական կուսակցության տեսքով իսլամիստների վերադարձը բացառվում է, քանի որ նրանց կրոնական բնույթը չի համապատասխանում Սիրիայի աշխարհիկ բնույթին»:

Դոկտեմբերի 7-ին Ասադը դժգոհեց, որ Թուրքիան միակողմանի պատժամիջոցներ է սահմանում Սիրիայի նկատմամբ, երբ անգամ ՄԱԿ-ը դա չի անում. «Իմ կարծիքով՝ ԱՄՆ-ը դեմ է Թուրքիայի եւ Սիրիայի միջեւ բարեկամությանը, իսկ Անկարան վերածվել է Օբամայի խոսնակի: Թուրքիան զենք է մատակարարում սիրիացի ապստամբներին: Այն հանդես է գալիս «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության օգտին, որը Սիրիայի համար նույնն է, ինչ Թուրքիայի համար Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (PKK): Թուրքիան 30 տարի շարունակ նոր Սահմանադրություն չի ընդունել, փոխարենը Սիրիայից պահանջուն է 3 ամսվա ընթացքում ձեռնարկել լայնամասշտաբ ժողովրդավարական բարեփոխումներ»:

Նույն օրը Դավութօղլուն հայտարարեց, որ Թուրքիան պատրաստ է Սիրիայի հետ ամեն տիպի սցենարի՝ ներառյալ պատերազմը: Բացի այդ, այժմ Թուրքիան Ասադին ճնշելու համար կազմել է 4 կետից քաղկացած պլան: Խոսքը Սիրիայի դեմ կիրառվելիք քաղաքական, տնտեսական, ռազմական ու հոգեբանական պատժամիջոցների մասին է: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Թուրքիան ներկայումս ձգտում է իշխանակություն իրականացնել Սիրիայում, քանի որ Ասադն իր ինքնուրույն քայլերով սկսել է ձեռք չտալ նրան: Թուրքիայի համար ավելի ցանկալի կլինի Ասադի փոխարինումը սուրճնի իսլամիստներով, որոնք ավելի բարյացակամ տրամադրված կլինեն Թուրքիայի նկատմամբ, եւ որոնց վրա ավելի քիչ ազդեցություն կունենա շիա Իրանը:

## Իրան

Սեպտեմբերի 14-ին Թուրքիան ու ԱՄՆ-ը Անկարայում հուշագիր ստորագրեցին Թուրքիայի տարածքում ՆԱՏՕ ռադիոտեղորոշիչ կայանի (ՊՏԿ) տեղակայման մասին, որի որոշումը կայացվել էր դեռևս նախորդ տարվա նոյեմբերին Լիսաբոնում տեղի ունեցած ՆԱՏՕ համաժողովում: ՊՏԿ-ն տեղակայվելու է Թուրքիայի Մալաթիա նահանգի Քյուրեջիք

Վայրում՝ թուրք-իրանական սահմանից 540 կիլոմետր հեռավորության վրա: Թեեւ համաձայնագրում նշված չէ, որ դա ուղղված է Իրանի դեմ, սակայն բոլորի համար դա ակնհայտ է: Դրա համար էլ Իրանն ամենատարբեր մակարդակով սկսեց թուրքական կողմին զգուշացնել թուրք-իրանական հարաբերությունների համար այդ քայլի վնասակարության մասին. «Թուրքիան սխալ քաղաքականություն է վարում Իրանի հանդեպ եւ շարժվում ԱՍՍ գծած ուղիով: Այդ ՈՏԿ-ն ուղղված է Իրանի ու Սիրիայի դեմ եւ ծառայելու է Խորայելի պաշտպանությանը: Թուրք-իսրայելական լարվածությունն էլ ուղղակի բեմականացում է, Թուրքիան ու Խորայելը կուլիսների հետեւում շարունակում են բանակցել միմյանց հետ: ՈՏԿ տեղակայման նպատակն Իրանի հրթիռային հզորության ճնշումն է, քանի որ հակառակ դեպքում Թուրքիան կարող էր դա տեղակայել իր արեւմտյան եւ ոչ թե արեւելյան հատվածում»:

Սեպտեմբերի վերջին երդողանը փորձեց հանգստացնել իրանական կողմին. «Առաջին հերթին ցանկանում եմ ընդգծել, որ Թուրքիայուն ՈՏԿ տեղակայումը ՆԱՏՕ նախագիծ է: Այդ պայմանագրում նշված չէ կոնկրետ երկրի մասին: Թուրքիան ինքն է ընդունում իր տարածքին առնչվող ցանկացած որոշում: Ես բաց հայտարարում եմ, որ մենք երբեք չենք թույլատրի, որ մեր տարածքից որեւէ հարձակում ձեռնարկվի Իրանի վրա, քանի դեռ Թուրքիայի համար վտանգ չի առաջացել»:

Թուրքական կողմն ընդգծում էր, որ Քյուրեջիքի ՈՏԿ-ից ստացված տվյալները չեն փոխանցվելու Խորայելին՝ որպես ՆԱՏՕ անդամ չհանդիսացող երկրի: Սա նախորդ տարվա Լիսաբոնյան գագաթաժողովում Թուրքիայի ներկայացրած 3 նախապայմաններից մեկն էր: Սակայն The New York Times-ը գրեց, որ Քյուրեջիքի ՈՏԿ-ից ստացված տվյալներն ԱՄՆ-ը փոխանցելու է Խորայելին: Ըստ թերթի՝ ՈՏԿ տեղակայումը վերջին 20 տարիներին Վաշինգտոնի եւ Անկարայի միջեւ ռազմական համագործակցության շրջանակներում արված առավել նշանակալից նախագիծն է, եւ ամենանշանակալից քայլը՝ սկսած 2003 թվականի իրաքյան պատերազմից:

Թուրք փորձագետ ու ընդդիմադիր պատգամավոր Սինան Օղանը ՈՏԿ-ի կապակցությամբ նշել է. «Թուրքական կառավարությունը ցանկանում է ստեղծել Խորայելի հետ հարաբերությունների վատքարացման տեսիլք, սակայն դա չի համապատասխանում նրա գործունեությանը: ՈՏԿ տեղակայումն ի ցույց է դնում Խորայելի հետ լարվածության քաղաքականության կեղծ լինելը: Աշխարհագրությանը տեղյակ մարդիկ գիտեն, որ այդ համակարգի տեղակայման նպատակն Խորայելին պաշտպանելն է,

բանի որ Իրանից արձակված հրթիռն ի վիճակի չէ հասնել Եվրոպա: Աշխարհագրական տեսանկյունից Մալաթիան ամենահարմար կետն է Իսրայելի եւ Իրանի միջեւ: ՈՏԿ-ն ոչ թե պաշտպանական, այլ, ընդհակառակը, հարձակման միջոց է: Այն կարող է Թուրքիայի եւ Իրանի միջեւ պատերազմի պատճառ դառնալ»:

Պետք է նշել, որ թուրք-իրանական հարաբերությունների վրա բացասարար են անդրադարձում նաև Սիրիայի վերաբերյալ երկու երկրների տարբեր մոտեցումները: Իրանական կողմը Թուրքիային բազմիցս հայտարարել է, որ եթե նրա գործողությունների պատճառով ստիպված լինի ընտրություն կատարել Սիրիայի ու Թուրքիայի միջեւ, ապա անպայմանորեն ընտրելու է արաբական երկիրը: Իրանը Թուրքիային նաև գգուշացրել է, որ դեմ է Սիրիայում ՆԱՏՕ ռազմական միջամտությանը, ինչի համար կարող է օգտագործվել նրա տարածքը:

Այսպիսով, թուրք-իրանական հարաբերություններն էլ ավելի սրբելու միտում ունեն՝ հաշվի առնելով Քյուրեջիքի ՈՏԿ-ի եւ Սիրիայի շուրջ հետագա զարգացումները: Թուրքիան շարունակելու է տարածաշրջանում ու արաբական աշխարհում Իրանի ազդեցության նվազեցմանն ուղղված քաղաքականությունը:

## Իրաք

Այն բանից հետո, ինչ ՊKK-ն կտրուկ ակտիվացավ Թուրքիայում, թուրքական ավիացիան օգոստոսի 17-ից սկսեց հարվածներ հասցնել Ջյուսիսային Իրաքում գտնվող նրա ճամբարներին: Սա հարուցեց Իրաքի դեկավարության դժոխությունը, որը բողոքի նոտա հղեց Թուրքիային: Սակայն Դավութօղլուն հայտարարեց, որ իրենք չեն հանդուրժի, որ ՊKK-ն Իրաքից սպառնա Թուրքիային, իսկ երդողանը հայտարարեց, որ Իրաքը պարտավոր է մաքրել այդ տարածքն ահաբեկիչներից, եւ եթե Իրաքը դա չանի, ապա նրա փոխարեն դա կանի Թուրքիան, եւ Իրաքը կզղաք դրա համար:

Հոկտեմբերի 5-ին Թուրքիայի խորհրդարանը մեկ տարով երկարաձգեց անդրահամանային օպերացիաներ անցկացնելու ժամկետը, որը սպառվում էր հոկտեմբերի 17-ին: 1950 թվականից ի վեր՝ դա թուրքական խորհրդարանի 33-րդ նմանատիպ որոշումն էր, որով թուրքական բանակի առջեւ «կանաչ լուս» վառվեց Ջյուսիսային Իրաք ներխուժելու համար, ինչը կարող է տեղի ունենալ ամեն պահի: Անգամ նշվում է, որ Թուրքիան այնտեղ ներխուժելու է միանգամից 7 կետից: Թուրքիան

Աերկայումն ցանկանում է նաեւ երկու ռազմակայան կառուցել Յյուսիսային Իրաքում՝ PKK-ի գինյալների հոսքի դեմն առնելու համար:

Յատկանշականն այն է, որ Թուրքիային հաջողվեց ԱՄՆ-ի հետ պայմանավորվածության հանգել Predator անօդաչու հետախուզական ինքնարիոնների տեղափոխման շուրջ: Ըստ դրա՝ Իրաքից ամերիկյան գործերի դուրսբերումից հետո Predator-ները տեղափոխվելու են Թուրքիա, տեղակայվելու են Ինջիրլիքի ամերիկյան ռազմակայանում եւ գործածվելու են PKK-ի դեմ պայքարում: Սրանով Թուրքիան փոխհատուցում է Խարայելի հետ հարաբերությունների վատթարացումից իր կրած թերեւս ամենամեծ վնասը: Խոսքը ռազմական ոլորտում թուրքիայելական համագործակցության եւ, մասնավորապես, Heron անօդաչու թռչող սարքերի մասին է, որոնք Թուրքիան կիրառում է PKK-ի դեմ եւ իր խողովակաշարերի պաշտպանության համար:

## Աղրբեջան

Սեպտեմբերի 19-ին Աղրբեջանում Թուրքիայի դեսպան Յուլուսի Քըլըզը աղրբեջանական կողմից պահանջեց վերանայել Խարայելի հետ իր հարաբերությունները՝ ընդգծելով, որ Աղրբեջանի պատճառով Թուրքիան 18 տարի շարունակ փակ է պահում հայ-թուրքական սահմանը, եւ որ Թուրքիայի խնդիրը պետք է դառնա նաեւ Աղրբեջանի խնդիրը: Սակայն ներկայումս ողջ մուսուլմանական աշխարհում Խարայելի հետ ամենաջերմ հարաբերություններն ունեցող Աղրբեջանն անարձագանք թողեց դա:

Ուշագրավ է, որ ընդամենը 5 օր անց Թուրքիայի Նախարարների խորհուրդը խորհրդարանի օրակարգ վերադարձեց օգոստոսի 22-ին անվավեր ճանաչված հայ-թուրքական արձանագրությունները: Բնականաբար, սա չի կարող չանհանգստացնել Աղրբեջանին: Այս կապակցությանք Բաքվի «Զերկալո» թերթը գրեց. «Մինչ ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումը, Անկարայի ու Բաքվի միջեւ գոյություն ուներ գաղտնի համաձայնագիր, ըստ որի՝ կողմերը «չեն նկատում» խնդրահարույց հարցերի վերաբերյալ միմյանց դիրքորոշումները: Թուրքիան «չեր նկատել» Աղրբեջանի կողմից ՅԿԹՆ-ի չճանաչումը, իսկ Բաքուն իր հերթին «չնկատելու է տվել» Թուրքիայի կողմից Կոստոնյի անկախության ճանաչումը, ինչը հակասում է Աղրբեջանի շահերին:

Իրավիճակը, սակայն, կտրուկ փոխվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի գործարկումից հետո: Աղրբե-

ջանը հրապարակավ օգտագործեց բոլոր հնարավոր ճնշալծակները՝ Անկարային հաշտեցման գործընթացից հետ պահելու համար: Ամենաբարձր մակարդակով հայտարարվեց, որ եթե Անկարայի ու Երեւանի միջեւ երկխոսությունը հաջողությամբ ավարտվի, ապա Աղրբեջանը կարող է վերանայել Թուրքիայի հետ հարաբերությունների բնույթը: Մինչդեռ այժմ առաջին անգամ այդպիսի հայտարարությամբ հանդես է գալիս թուրքական կողմը»: Իսկ Բարքի «Պոլիգոն» թերթը, Վկայակոչելով իր թուրքական աղբյուրներին, գրեց, որ Երդողանը որոշել է աջակցել աղրբեջանական ընդդիմությանը, քանի որ ցանկանում է Բարքում տեսնել իր հանդեա առավել բարյացակամ տրամադրված ռեժիմ՝ սեփական հավակնություններն առաջ տանելու համար:

Աղրբեջանցի քաղաքագետ Առասթուն Օրություն նկատել է. «Պաշտոնական Բաքուն արտաքին քաղաքական առաջնահերթություններ չունի, ինչն էլ լուրջ բարդություններ է առաջացնում: Այսօր քաղաքականությունից այնքան էլ չհասկացող մարդու համար ակնհայտ է, որ անհնար է միաժամանակ լավ հարաբերություններ ունենալ Իրանի եւ ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Ռուսաստանի, Իրանի եւ Իսրայելի, Թուրքիայի եւ Իսրայելի հետ: Այսօր անհնար է գտնել գեր մեկ երկիր, որին կարելի լինի համարձակորեն անվանել Աղրբեջանի դաշնակից: Եթե պաշտոնական Բարքի այդ քաղաքականությունը հանգեցրել է անգամ եղբայրական Թուրքիայի հետ բարդությունների առաջացմանը, ապա Ռուսաստանի, Եվրոպայի եւ ԱՄՆ-ի մասին կարելի է ընդհանրապես չխոսել»:

## Ռուսաստան

Օգոստոսի վերջին Թուրքիայի էներգետիկայի նախարար Թաներ Յըլդըզը վերջնագիր ներկայացրեց Ռուսաստանին՝ Թուրքիային հատկացվող գազի գինը նվազեցնելու վերաբերյալ: Ըստ Յըլդըզի՝ ռուսական «Գազպրոմ»-ը վերջին 29 ամիսների ընթացքում 39 տոկոսով բարձրացրել է գազի գինը: Սակայն ռուսական կողմը չարձագանքեց դրան, ինչից հետո Թուրքիան հայտարարեց, որ չի երկարաձգում դեռեւս 25 տարի առաջ կնքված գազային համաձայնագրի ժամկետը, որը սպառվում էր այս տարեվերջին: Ըստ դրա՝ Ռուսաստանը Արեւմտյան գազատարով (Ուկրաինա, Ռումինիա, Բուլղարիա) տարեկան 6 միլիարդ խորանարդ մետր գազ էր հատկացնում Թուրքիային: Ընդհանուր առմամբ, Թուրքիայի սպառած գազի 64 տոկոսը բաժին է ընկնում Ռուսաստանին, որն Արեւմուտքի համար առաջնահերթ համարվող

«Նաբուկո» գազատարի մրցակից հանդիսացող «Յարավային հոսք» գազատարի նախագծի իրագործման հարցում կախվածության մեջ է Թուրքիայից:

Փորձագետներն անմիջապես նշեցին, որ դրանով «Գազպրոմ»-ը կորցրեց Թուրքիայի 20 տոկոսը՝ 2.7 միլիարդ դոլար: Բացի այդ, Թուրքիայի այդ քայլը Ռուսաստանին դնում է Ռուսականայից տարանցիկ կախվածության մեջ, իսկ Ռուսիային ու Բուլղարիային (մասամբ նաև Ռուսականային) գրկում ռուսական գազի տարանցումից: Յըլդըզի կարծիքով՝ Թուրքիան ժամանակին 3-4 գազային համաձայնագիր է կնքել Ռուսաստանի հետ, եւ ներկայումս դրանցից մեկի ժամկետի չերկարաձգելը մեծ ազդեցություն չի ունենա երկրի ընդհանուր վիճակի վրա, քանի որ Թուրքիան շարունակում է ռուսական գազ ներկրել «Երկնագույն հոսք» գազատարով:

Ռուս վերլուծաբանները կարծում են, որ պաշտոնական Անկարան շատ հարմար ժամանակ է ընտրել ռուսական «Գազպրոմ»-ին հարված հասցնելու համար՝ հաշվի առնելով ոչ վաղ անցյալում «Գազպրոմ»-ի Եվրոպական դուստր ընկերություններում Եվրահանձնաժողովի իրականացրած ստուգումները: Նրանք կարծում են, որ Թուրքիան օգնում է ԵՄ-ին ռուսական գազային մենատիրության թուլացման հարցում, եւ որ Եվրահանձնաժողովի իրականացրած ստուգումների ու թուրքական գազային դեմարդի ժամկետների համընկնումը պատահական չէր:

## Ամփոփում

Այսպիսով, մենք ականատեսն ենք դառնում արտաքին քաղաքական ոլորտում Թուրքիայի ամնախաղեա ակտիվության, ինչը համապատասխանում է նեոսմանիզմի ոգուն: Ներկայումս կարծիքներ են շրջանառվում, թե Թուրքիայի որդեգրած «զրո խնդիր հարեւանների հետ» սկզբունքը տապալվել է, եւ Թուրքիան թուլացած է դուրս գալիս «Արաբական գարունից»՝ ավելացնելով իր հակառակորդների թիվը. սակայն դա այդքան էլ այդպես չէ: Յոկտեմբերի 17-ին Դավութօղլուն հայտարարեց, որ «զրո խնդիր հարեւանների հետ» քաղաքականությունը չի ավարտվել, այն շարունակվում է, եւ որ Թուրքիան ներկայումս խնդիր ունի միայն Սիրիայի հետ, իսկ մնացած հարեւանների հետ գտնվում է լավ հարաբերությունների մեջ:

Ներկայումս Թուրքիայի դիրքերն ու ազդեցությունն ավելի են ամրագրվել «Արաբական գարուն» վերապրած երկրներում եւ, մասնա-

Վորապես, Եգիպտոսում ու Լիբիայում: Երդողանը մեծ ընդունելության արժանացավ Եգիպտոսում եւ կնքեց մի շարք պայմանագրեր, մինչդեռ չպետք է մոռանալ, որ Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մութարաքն ամենեւին չէր սիրում Թուրքիային՝ վերջինիս դիտարկելով որպես մրցակից իսլամական աշխարհում: Լիբիայում նույնպես ակնհայտ է Թուրքիայի հաջողությունը. Լիբիայի Ազգային անցումային խորհրդի առաջնորդ Մուսթաֆա Արդուլզելիը պատմական իրադարձություն է որակել Երդողանի լիբիական այցը՝ ընդգծելով, որ Երդողանն ու թուրք ժողովուրդն իսլամական աշխարհի առաջնորդներն են: Արեւելյան Միջերկրածովյում արդեն իսկ տեսանելի են Թուրքիայի ձեռքբերումները: Գազայում պատրաստ են Երդողանին դիմավորել աստծու նման: ԱՄՆ նախկին պետքարտուղար, միջազգային հարաբերությունների փորձագետ Ջենրի Քիսինցերի կարծիքով՝ Թուրքիան լցնելու է այն վակուումը, որն առաջանալու է Իրաքից եւ անգամ Աֆղանստանից ԱՄՆ հեռանալուց հետո:

Այսօր բանը հասել է նրան, որ Թուրքիան 7 կետանոց վերջնագիր է ներկայացնում ԵՄ-ին՝ սպառնալով սառեցնել նրա հետ իր հարաբերությունները, եթե կիպրական հարցը լուծում չստանա, նախքան 2012 թվականին Կիպրոսի կողմից ԵՄ նախագահության ստանձնումը: Թուրքիայի հնչեղ հավակնությունների մասին է վկայում նաեւ այն, որ ներկայումս այն բարձրաձայնում է թուրքերենը ՄԱԿ 6 պաշտոնական լեզուների շարքում ներառելու եւ ՄԱԿ ԱԽ կառուցվածքը փոխելու անհրաժեշտության մասին՝ գտնելով, որ սխալ է, երբ նրա 5 մշտական անդամ երկրները տնօրինում են մնացյալ 188 երկրների ճակատագիրը:

## ՏԱՐԱԾՈՂԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՄԵԼԱԿ Սարուխանյան

Վերջին շոշանում ակտիվացել են գործընթացները տարածաշրջանային էներգետիկ նախագծերի հրականացման ոլորտում՝ հատկապես Տրանսկասպյան գազատարի կառուցման վերաբերյալ բանակցությունների եւ ռուս-բուլղարական էներգետիկ հարցերում առաջացած խոր տարածայնությունների ուղղությամբ:

### ԵՄ-Ը ընդդեմ «Գազպրոմի». Տրանսկասպյան գազատարը

Սեպտեմբերի վերջին օրերին Եվրոպայում բնական գազի մատակարարման մի քանի խոշոր ընկերությունների գրասենյակներում անսպասելիորեն ստուգումներ սկսվեցին, որոնք, համաձայն Եվրամիության բարձրագույն կառավարման մարմնի տարածած հաղորդագրության, իրականացվել են Եվրոպական հանձնաժողովի որոշմամբ: Ստուգումներին մասնակցել են մի քանի Եվրոպական երկրների անվտանգության մարմինների ներկայացուցիչներ, որոնց նպատակն է եղել պարզել ստուգվող ընկերությունների կողմից մենաշնորհային դիրքի օգտագործման եւ հնարավոր կոռուպցիոն գործերի բացահայտումը: Չնայած նախնական տվյալներով ստուգումներն անցկացվել են Եվրոպական 8 ընկերություններում, դրանց փաստը հաստատել են այդ ընկերություններից ընդամենը մի քանիսը. գերմանական RWE կոնցեռնի չեխական մասնաճյուղը, գերմանական հսկա E.ON Ruhrgas-ը եւ լեհական PGNiG ընկերությունը: Այս ստուգումները կարելի էր համարել զուտ Եվրոպական գործ, եթե ստուգվող ընկերությունները չլինեին ռուսական «Գազպրոմի» հիմնական Եվրոպական գործընկերները, որոնք գրադարձ են ռուսական գազը ԵՄ անդամ երկրներուն վաճառելով:

Դատկանշական է, որ Եվրոպական ընկերությունների ստուգումներից հետո Եվրոպական իրավապահ մարմինների ներկայացուցիչներն այցելեցին Բեռլինում տեղակայված «Gazprom Germania» ընկերության գրասենյակ եւ փորձեցին բացահայտել բնական գազի առքուվաճառքի մասին ընկերության կնքած պայմանագրերի թափանցիկությունն ու համապատասխանությունը Եվրոպական օրենսդրությանը: Կատարված

խուզարկումներից հետո Եվրոպական մի շարք վերլուծաբաններ կարծիք հայտնեցին, որ ստուգումների հիմնական նպատակը ռուսական «Գազպրոմի» վրա ճնշում գործադրելու է: Ընկերությունը տարե-վերջին նոր պայմանագրեր է կնքելու Եվրոպական ընկերությունների հետ գազի մատակարարման եւ դրա գնի վերաբերյալ, եւ պաշտոնական Բրյուսելը փորձում է ստիպել ռուսական ընկերությանը՝ իշեցնել բնական գազի գինը:

Ստուգումների մեկ այլ նպատակ կարելի է համարել այն, որ ԵՄ-ը փորձում է խափանել Մոսկվայի՝ Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի գազային ընկերությունների կլանման ծրագրերը, ինչի արդյունքում ռուսական «Գազպրոմը» կարող է դառնալ ոչ միայն դեպի Եվրոպա բնական գազի մատակարարը, այլ նաև այդ գազի բաշխումն ապահովողը տարածաշրջանում: Նման հեռանկարը մեծ վտանգ է ներկայացնում ԵՄ-ի համար, քանի որ ռուսական ընկերության կողմից Եվրոպական ընկերությունների կլանման արդյունքում Մոսկվան կարող է վերահսկողության տակ առնել Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի էներգետիկ ընկերությունները եւ անմիջականորեն ազդել ԵՄ ներքին եւ արտաքին էներգետիկ քաղաքականության վրա: Իսկ ազդեցությունը հիմնականում ուղղված կլինի Կենտրոնական Ասիայից Ռուսաստանի տարածքը շրջանցող եւ դեպի Եվրոպա գազի ներկրումն ապահովող Տրանսկասպյան եւ «Նաբուկո» գազատարների կառուցման Եվրոպական փորձերը խափանելուն:

Սա կարեւոր խնդիր է ԵՄ-ի համար, քանի որ Բրյուսելն ակտիվացրել է Տրանսկասպյան գազատարի կառուցման վերաբերյալ համաձայնության ձեռքբերման փորձերը: Դեռեւ 2011-ի մարտին թուրքմենական կառավարությունը հաստատել էր իր մասնակցությունը գազատարի կառուցման նախագծին, ինչի մասին Deutsche Welle-ին հայտարարել էր «Նաբուկո» կոնսորցիոնի գործադիր նախագահ Ռ.Միտչեկը: Նույն հայտարարության մեջ նա նշել էր, որ նախագծին Թուրքմենստանի միանալու համար հարեւան երկրների համաձայնությունն ստանալու անհրաժեշտություն չկա. «Տրանսկասպյան գազատարի կառուցման համար անհրաժեշտ է ձեռք բերել համաձայնություն միայն Ադրբեյջանի եւ Թուրքմենստանի միջեւ. մնացածն ընդամենը շահարկումներ են»:

Թուրքմենստանից հետո ԵՄ-ն ակտիվացրեց բանակցությունները նաև Ղազախստանի հետ Տրանսկասպյան գազատարի կառուցման հարցի վերաբերյալ: Դոկտենբերի 3-ին, ռուսական «Գազպրոմի» Եվրոպական գործընկերների եւ ընկերության ներկայացուցչության գրասենյակներում կատարված ստուգումների ֆոնին, Աստանայում անցկացվող

KAZENERGY համաժողովի ժամանակ եՄ էներգետիկ հարցերով կոնխսար Գ.Օտինգերը պաշտոնապես հրավիրեց Ղազախստանին միանալ Տրանսկասպյան գազատարի կառուցման նախագծին, որի շնորհիվ Ղազախստանը կարող է բնական գազ արտահանել Եվրոպա՝ շրջանցելով ռուսական տարածքը եւ «Գազպրոմի» միջնորդությունը։ Գ.Օտինգերը, մասնավորապես, նշեց. «Շատ քիչ մարդ գիտի, թե ինչքան կարեւոր է այս նախագիծը ԵՄ-ի համար, եւ որ սա առաջին դեպքն է, եթե Միությունն առաջարկում է կնքել լիարժեք միջազգային պայմանագիր Ենթակառուցվածքային նախագծի իրականացման համար»։ Նշենք, որ չնայած պաշտոնական Աստանան միանշանակ դրական պատասխան չտվեց եՄ հանձնակատարի առաջարկին, սակայն պետական եւ խոշորագույն «Ղազմունայգազ» ընկերության փոխնախագահը հայտարարեց, որ ընկերությունը դեմ չէ Ղազախստանի միացմանը գազատարին։

ԵՄ ակտիվացումը լուրջ վտանգ է ներկայացնում Մոսկվայի համար. սա են վկայում ռուսական պաշտոնատար անձանց բազմաթիվ հայտարարությունները Տրանսկասպյան գազատարի կառուցման վերաբերյալ։ ԵՄ-ում էներգետիկ ընկերությունների ստուգումն ու Ղազախստանի՝ Տրանսկասպյան գազատարի նախագծին միանալուն ուղղված առաջարկություններն անմիջապես արժանացան ՌԴ ԱԳՏ բացասական գնահատականներին։ Սակայն անսպասելիորեն Տրանսկասպյան գազատարը դարձավ Ռուսաստանի Ղաշնության նախագահ Դ.Մեդվեդեվի՝ հոկտեմբերի 14-ին ՌԴ Անվտանգության խորհրդում ունեցած ելույթի հիմնական թեման։ Ռուսաստանի նախագահը, մասնավորապես, նշեց. «Գազատարի կառուցումը շատ լուրջ խնդիր է, որն անմիջականորեն կապված է Կասպից ծովի իրավական կարգավիճակի հետ եւ պահանջում է մերձօվյան բոլոր երկրների համաձայնությունը»։ Ռուսաստանի նախագահի այս հայտարարությունը մատնանշում է Կասպիցի հարցով Մոսկվայի պաշտոնական դիրքորոշման կտրուկ փոփոխություն։ Եթե նախկինում Մոսկվան քննադատում էր Թեհրանին, որ վերջինս խառնվում է Կասպիցին հարակից պետությունների երկկողմանի նախագծերին, եւ որ եթե երկու պետություն չունեն սահմանային հարց, ապա կարող են ինքնուրույն եւ անկախ քննարկել երկկողմանի հարաբերությունները, ապա Դ.Մեդվեդեվի հայտարարությունից հետո Մոսկվան, վաստորեն, սկսում է կիսել հենց Թեհրանի մոտեցումը։ Այն է՝ չի կարող լինել նախագիծ, որը չհամաձայնեցվի Կասպիցին հարակից բոլոր երկրների հետ։

Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ Ռուսաստանի կառչելը Կասպիցի իրավական կարգավիճակից կարող է խոսել այն մասին, որ Մոսկվան մասամբ կորցրել է Աստանային եւ Աշգաբադին Տրանսկասպյան

գազատարի կառուցումից հետ պահելու լծակները։ Սա բավական հետաքրքիր իրողություն է ՈԴ վարչապետ Վ.Պուտինի՝ Ղազախստանի մասնակցությամբ նոր Եվրասիական միություն ստեղծելու մասին հոդվածից հետո։

Ինչեւէ, արդեն իսկ պարզ է, որ ԵՄ ներքաշվածությունը Կենտրոնական Ասիայի էներգետիկ գործերում Մոսկվան դիտում է որպես սպառնալիք սեփական շահերին, իսկ Տրանսկասայյան գազատարի կառուցումը, որը թուրքմենական եւ/կամ ղազախական գազի հանքավայրերը կմիացնի Բաքվին եւ ապագա «Նաբուկո» գազատարին, որպես իրականացման մեջ շանսեր ունեցող նախագիծ։ Սա անմիջականորեն ազդելու է Ուստաստանի հարավկովկասյան քաղաքականության վրա եւ կարող է նաև բացասաբար անդրադառնալ ռուս-ադրբեջանական հարաբերություններին, քանի որ հենց Ադրբեջանն է փորձում դառնալ Կենտրոնական Ասիայից բնական գազը ԵՄ արտահանելու ռուսական ճանապարհի այլընտրանք։ Դնարավոր ռուս-ադրբեջանական էներգետիկ հակասություններն անմիջականորեն կապված են նաև ռուս-թուրքական հարաբերությունների հետ, որոնք էներգետիկ ոլորտում լուրջ հետընթաց են ապրում։

### **Ռուս-թուրքական էներգետիկ հակասությունները**

Մոսկվայի համար, հավանաբար, անսպասելիորեն ԵՄ-ում ռուսական գազի դեմ սկված արշավին միացավ նաեւ Թուրքիան։ Սեպտեմբերի 29-ին Թուրքիայի էներգետիկայի նախարար Թ.Յըլիզզը «Բուգյուն» թերթին տված հարցազրուցում հայտարարեց, որ եկող տարվանից թուրքական պետական խոշորագույն «Բորաշ» ընկերությունը ռուսական գազ չի գնի, եթե «Գազպրոմը» «զգալիորեն չի հետապնդում Թուրքիային վաճառվող բնական գազի գինը»։ Ընդ որում՝ թուրք նախարարի հայտարարության տոնը խիստ սուր էր եւ կոշտ։ Նա նշեց, որ եթե անգամ ռուսները գինն իշեցնեն, դրանից միանգամից չի բխելու, թե թուրքերը գազը կգնեն։ Անկարային, ինչպես նշեց նախարարը, հետաքրքրում են ռուսական նոր առաջարկերը, որոնք կարող են քննարկվել, ընդունվել կամ մերժվել։ Ինչպես նշեցին մի քանի ռուս վերլուծաբաններ, թուրք նախարարի հայտարարությունը «նման է բլեֆի», որի նպատակն է ստիպել Մոսկվային իշեցնել Թուրքիային մատակարարվող գազի գինը։ Սակայն հոկտեմբերի 1-ին թուրք նախարարը հայտարարեց որպես պաշտոնական դիրքորոշում։ 2012-ից Թուրքիան այլևս չի գնի Ուկրաինայի, Մոլդովայի, Ռումինիայի եւ Բուլղարիայի տարածքով («արեւմտյան միջանքը») 1986-ից ներկրվող ռուսական գազը, եւ եթե Մոսկվան ուզում է շարունակել այն վաճառել,

ապա պարտավոր է փնտրել նոր մասնավոր գործընկերներ Թուրքիայում, քանի որ պետական «Բորաշն» այլեւս ռուսական «Գազպրոմի» հետ այս գաղի գնման մասին պայմանագիր չի ստորագրի: Որ թուրքական դիրքորոշումը պարզապես բլեֆ չէ, ապացուցվեց այն բանից հետո, երբ գաղի գնման հարցերի քննարկման նպատակով հեռախոսազրույց տեղի ունեցավ Թուրքիայի եւ Ռուսաստանի վարչապետեր Ռ.Էրդողանի եւ Վ.Պուտինի միջև:

ՈԴ վարչապետի մամուլի քարտուղար Դ.Պեսկովը հեռախոսազրույցում հաստատել է, որ թուրքական «Բորաշը» հրաժարվել է գնել ռուսական գազը: «քննարկել են... Թուրքիային ռուսական գաղի մատակարարման շարունակման հեռանկարները՝ հաշվի առնելով, որ թուրքական ընկերություններից մեկը հրաժարվել է երկարաձգել այդ մասին պայմանագրի ժամկետը»: Թե ինչ թուրքական մասնավոր ընկերություն կփոխարինի «Բորաշն» եւ կփոխարինի արդյոք (թուրքական գազատարները պատկանում են «Բորաշն», եւ մասնավոր ընկերությունների համար բարդ է դրանցից օգտվելը՝ դեռեւս բաց հարց է: Սակայն ակնհայտ է, որ Թուրքիան ուղղակիորեն գնում է ռուսական գաղի ներկրման ծավալների կրճատման ուղղությամբ, ամենայն հավանականությամբ, սպասելով ադրբեջանական գաղի ներկրման ծավալների կտրուկ ավելացմանը: Խոսքն, իհարկե, ռուսական գաղից ընդհանրապես հրաժարվելու մասին չէ. տարեկան 18 մլրդ խոր. մ ռուսական բնական գաղից ընդհամենը 6 միլիարդն է Թուրքիա ներկրվում «Արեւմտյան միջանցքով», մնացածի ներկրումն իրականացվում է «Երկնագույն հոսքով»: Սակայն թուրքական միտումը՝ փոխարինել ռուսական գազն ադրբեջանականով, արդեն իսկ ակնհայտ է:

Տնտեսական տերմիններով թուրքերի հրաժարումը ռուսական գաղից դժվար է բացատրել, քանի որ «Գազպրոմը» Հայաստանից հետո ամենաէժան գնով գազը վաճառում է Թուրքիային՝ 1000 խոր. մ-ի դիմաց ստանալով \$250, որն անհամեմատ ավելի էժան է Եվրոպային վաճառվող ռուսական գաղի գնից: Անգամ ավելի էժան է Թուրքիային վաճառվող ադրբեջանական գաղից, որի պայմանագրային արժեքը 2011-ի համար կազմում է \$280 1000 խոր. մ-ի համար: Սակայն, եթե Անկարայի դիրքորոշման քննարկումն իրականացվի Եվրոպայում ռուսական գաղի ներկրման դեմ սկսված արշավի եւ Տրանսկասպյան գազատարի կառուցման գործում նկատելի առաջընթացի հետ փոխկապակցված, ապա թուրքական մոտեցումն ավելի հասկանալի կարող է դառնալ: Անկարան գիտակցում է, որ «Նաբրուկոյ» եւ Տրանսկասպյան գազատարի կառուցման արդյունքում ինքը կդառնա տարածաշրջանային էներգակիրների

տարանցման խոշոր կենտրոն, կամրապնդի սեփական դիրքերն Աղրբեցանի, Կենտրոնական Ասիայի եւ Եվրոպայի էներգետիկ ոլորտներում: Բոլոր այս տեղերում Անկարայի հիմնական մրցակիցը հենց Ռուսաստանն է: Վերջին տարիների ռուս-թուրքական հարաբերությունների բարձր որակը պայմանավորված էր նաև նրանով, որ Կասպիական էներգակիրների՝ Ռուսաստանը շրջանցող եւ Թուրքիայի տարածքով անցնող խողովակաշարերի նախագծերը սառեցված էին, ինչի արդյունքում նախկին ռուս-թուրքական էներգետիկ հակասությունները մղվել էին երկրորդ պլան: Այսօր, երբ այդ նախագծերը վերակենդանում են, Անկարայի եւ Մոսկվայի տարածայնությունները նորից ջրի երես են ելնում:

Անփոփելով նշենք, որ էներգետիկ ոլորտում ակտիվացած տարածաշրջանային զարգացումները պայմանավորելու են նոր հակասություններ տարածաշրջանի պետությունների միջև, խորացնելու են մրցակցությունն էներգակիրների վերահսկողության համար եւ դրանով իսկ անմիջականորեն կարող են ազդել նավթի եւ գազի տարանցման առաջատար տարածաշրջաններից մեկի՝ Հարավային Կովկասի անվտանգության միջավայրի վրա:

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎԱԿՈՒՏՔՈՒՄ **ԲԵՆԻԱՄԻՆ Պողոսյան**

Ս.թ. հոկտեմբերի 3-ին ռուսական «Իզվեստիա» պարբերականում հրապարակվեց Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինի «Նոր ինտեգրացիոն գործընթաց Եվրասիայի համար. ապագա, որը ծնվում է այսօր» խորագրով հոդվածը: Վ.Պուտինը հոդվածում ներկայացնում է ԱՊՀ տարածքում վերջին տասնամյակի ընթացքում տեղի ունեցած ինտեգրացիոն գործընթացները, որոնց շնորհիկ 2012թ. հունվարի 1-ին նախատեսվում է Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի մասնակցությամբ Միասնական տնտեսական տարածության մեկնարկը: Միեւնույն ժամանակ, Պուտինը շեշտում է ինտեգրացիոն գործընթացների հետագա խորացնան կարեւորությունը՝ առաջ քաշելով Եվրասիական միության ստեղծնան գաղափարը: Ռուսաստանի վարչապետն անմիջապես փորձում է կանխել ԽՄՀՄ վերականգնման փորձի մեջադրանքները՝ նշելով, որ Եվրասիական միությունը չի նշանակում ԽՄՀՄ վերականգնում: Դրա փոխարեն Պուտինն առաջարկում է վերազգային հզոր միության ձեւավորման տեսլական, որը պետք է դառնա ապագա բազմաթեր աշխարհի կարեւոր օղակներից մեկը եւ կամրջի դեր կատարի Եվրոպայի ու ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի միջեւ: Խոսելով ապագա միության անդամների մասին՝ Պուտինը նշում է, որ Ռուսաստանից, Ղազախստանից եւ Բելառուսից բացի ապագայում միության անդամներ կարող են դառնալ նաեւ Ղրղզստանը եւ Տաջիկստանը, ավելացնելով, որ միությունը բաց է լինելու ԱՊՀ անդամ բոլոր պետությունների համար:

Պուտինի հոդվածն զգալի արձագանք ստացավ ինչպես Ռուսաստանի ներսում, այնպես էլ արտասահմանում, առաջին հերթին արեւմտյան երկրներում: Ռուսաստանում արձագանքը հիմնականում դրական էր, ինչը պայմանավորված է այն հանգանանքով, որ երկրի քաղաքացիների մեծ մասի մոտ շարունակվում է խորհրդային ժամանակների հանդեպ կարոտախտը, եթե ոչ սոցիալիստական կարգերի, ապա առնվազն Ռուսաստանի՝ համաշխարհային գերտերության կարգավիճակի հանդեպ, եւ այս համատեքստում շատերը նոր միություն ձեւավորելու Պուտինի առաջարկը դիտարկում են որպես այն կամ այն տարբերակով համաշ-

խարիսխին ասպարեզում Ռուսաստանի դիրքերն ամրապնդելուն ուղղված քայլ:

Նույնը չի կարելի ասել արեւմտյան արձագանքի մասին: Արեւմտյան մամուլում հրապարակվել են բազմաթիվ վերլուծություններ, որոնք լուրջ քննադատության են ենթարկում Ռուսաստանի վարչապետի նոր գաղափարը:

Բրիտանական «Թելեգրաֆ» պարբերականում հրապարակված հոդվածում նշվում է, որ Եվրասիական միություն ստեղծելու Պուտինի ծրագիրը ռուսական կայսրության վերականգնման փորձ է, որի հրական նպատակն է վերահաստատել Ռուսաստանի տիրապետությունը Երկրագնդի առնվազն մեկ հինգերորդի նկատմամբ: Միաժամանակ նշվում է, որ չնայած Պուտինի բոլոր ջանքերին՝ կանխելու իրեն ուղղված մեղադրանքները, Եվրասիական միության ստեղծման հիմնական նպատակը հենց ԽՍՀՄ վերականգնումն է, ընդ որում՝ այս նոր կառույցում կոնունիզմին փոխարինելու է ավտորիտարիզմի գաղափարախոսությունը: Շեշտելով այն համգանանքը, որ բալթյան պետությունները, որոնք արդեն անդամակցել են Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին, ինչպես նաև Վրաստանը, որը 2008թ. Ռուսաստանի հետ պատերազմի հետեւանքով կորցրել է իր տարածքի շուրջ քսան տոկոսի նկատմամբ վերահսկողությունը, հազիվ թե համաձայնվեն անդամակցել նոր միությանը, միաժամանակ նշվում է, որ ԱՊՀ անդամ պետությունների մեծ մասը ամենայն հավանականությանը կանդամակցի նոր միությանը, քանի որ այն հնարավորություն կտա ամրապնդել տվյալ պետություններում հաստատված ավտորիտար վարչակարգերը եւ միեւնույն ժամանակ կնպաստի միջազգային հարաբերություններում այդ երկրների դիրքերի ուժեղացմանը:

Նոր միություն ստեղծելու առաջարկին անդրադարձել է նաև բրիտանական «Դեյլի մեյլ»: Փաստելով, որ Պուտինը նախկինում հրապարակայնորեն ԽՍՀՄ փլուզումը համարել է 20-րդ դարի աշխարհաքաղական մեծագույն աղետը, հոդվածում նշվում է, որ Ռուսաստանի գործող վարչապետի եւ ապագա նախագահի այս քայլի հիմնական նպատակը ԽՍՀՄ վերականգնումն է: Պարբերականին տված հարցագրույցում այդ մասին նշել է նաև հայտնի քաղաքագետ Ալեքսանդր Ռուգինը՝ պնդելով, որ աշխարհաքաղաքական տեսամյունից Եվրասիական միության հիմնումը ԽՍՀՄ վերստեղծման փորձ է: Միաժամանակ հոդվածում շեշտվում է, որ ԱՊՀ անդամ որոշ պետություններ դժվար թե միանշանակ ողջունեն այս գաղափարը, քանի որ նրանք ավելի շատ հակված են հարաբերությունները սերտացնել Եվրամիության, այլ ոչ թե Ռուսաստանի հետ:

Անդրադառնալով Պուտինի առաջարկին՝ իտալական «Լա Ստամպա» պարբերականը նշում է, որ ստեղծվելիք միության մեջ ասիական տարրը միանչանակ գերակշռություն կունենա Եվրոպականի հանդեպ: Որպես հիմնավորում բերվում է այն փաստը, որ բացի Բելառուսից, ապագա միության հավանական անդամների թվում են միայն նախկին ԽՍՀՄ միջնասիական հանրապետություններից Ղազախստանը, Ղրղզստանը եւ Տաջիկստանը: Ինչ վերաբերում է Բելառուսին, ապա այստեղ արդեն ձեւավորվել է գրեթե ստալինյան ժամանակներին բնորոշ վարչակարգ, ինչը եւս բավականաշափ հեռու է Եվրոպական չափանիշներից: Անդրադառնալով Ռուսաստանի ներքաղաքական իրավիճակին՝ պարբերականը շեշտում է, որ Ռուսաստանում լիակատար վերահսկողություն է հաստատվել զանգվածային լրատվության բոլոր միջոցների նկատմամբ, փաստացի հաստատվել է միակուսակցական համակարգ՝ «Միասնական Ռուսաստան» կուսակցության գլխավորությամբ:

Ռուսաստանի վարչապետի առաջարկն ավելի կտրուկ քննադատության է ենթարկվում լեհական «Ռեչ Պուսպոլիտայի» կողմից: Նշելով, որ Դմիտրի Մեդվեդևի նախագահության շրջանում ռուսական արտաքին քաղաքականությունը չի ենթարկվել էական փոփոխությունների եւ նրա հիմքում շարունակել են մնալ ռուսական ազդեցության տարածումն ու առաջին հերթին նախկին խորհրդային հանրապետություններում արեւմտյան ներգրավվածության սահմանափակումը, պարբերականը գրում է, որ Ռուսաստանն ամեն կերպ փորձում է վերականգնել համաշխարհային գերտերության նախկին կարգավիճակը, սակայն առնվազն միջնաժամկետ հեռանկարում նրան չի հաջովի հասնել իր առջեւ դրված նպատակների իրականացմանը:

Ռուսաստանի ներքաղաքական զարգացումները քննարկվում են նաեւ ամերիկյան մի շարք ուղեղային կենտրոնների վերլուծաբանների հրապարակումներում: Նրանք հիմնականում սուր քննադատության են ենթարկում Ռուսաստանի գործող վարչապետին՝ իշխող վարչակարգին մեղադրելով իշխանությունը եւ երկրի հիմնական ակտիվները ցմահ սեփական ձեռքբերում պահելու, իսկ այնուհետեւ այն զավակներին փոխանցելու փորձի մեջ: Որպես օրինակ բերվում է այն փաստը, որ Ռուսաստանի փոխվարչապետ Սերգեյ Իվանովի եւ Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշենի որդիները վերջին շրջանում դեկավար պաշտոններ են զբաղեցրել ռուսական առավել խոշոր բանկերից մեկում՝ «Ռոսսելխոզ» բանկում: Նշվում է, որ ռուսական գործող վարչակարգը հենվում է անձնիշխանության, տնտեսական հիմնական ակտիվների նկատմամբ տոտալ վերահսկողության եւ նեռկայսերական

հավակնությունների վրա: Ոուսական բարձրաստիճան պաշտոնյաների բացարձակ մեծամասնությունը պաշտոնական առաջխաղացման է հասել ոչ թե անձնական արժանիքների, այլ այս կամ այն ժամանակահատվածում Պուտինի ընկերը լինելու հանգամանքի շնորհիվ:

Նշելով, որ անգամ վարչակարգի ներսում շատերը հասկանում են ստեղծված իրավիճակի վտանգավորությունը, վերլուծաբանները շեշտում են, որ վարչակարգը քայլեր չի կատարի իրավիճակի փոփոխության ուղղությամբ, քանի որ ներկա հանակարգն ապահովում է նրանց տնտեսական շահերի պաշտպանությունը: Միեւնույն ժամանակ, իշխող վերնախավի ներկայացուցիչների բացարձակ մեծամասնությունը զգալի ակտիվներ ունի արեւմտյան պետություններում եւ անկանխատեսելի իրադարձությունների դեպքում կարող է շատ արագ ընդմիշտ հեռանալ Ոուսաստանից:

Յարկ է նշել, որ արեւմտյան վերլուծաբանները հիմնականում թերահավատությամբ են վերաբերվում Եվրասիական միության ստեղծման հեռանկարին: Չնայած նախագահ Մեղվերեւի կողմից հայտարարված արդիականացման քաղաքականությանը, Ոուսաստանի իշխանություններին չի հաջողվել հաղթահարել երկրի առջեւ կանգնած հիմնական մարտահրավերները, այդ թվում հանակարգային կոռուպցիան, ինչպես նաև ներքաղաքական կյանքում մրցակցության գրեթե խսպառ բացակայությունը: Ըստ նրանց, 2012թ. նախագահի պաշտոնում Պուտինի ընտրությունը դժվար թե արմատապես փոխի Ոուսաստանուն ստեղծված իրավիճակը, մանավանդ եթե հաշվի առնենք նախագահության երրորդ ժամկետում Պուտինի առջեւ կանգնած այնպիսի բարդ խնդիրների առկայությունը, ինչպիսիք են խորհրդային ժամանակներից մնացած ենթակառուցվածքների մաշվածությունը եւ տնտեսության գրեթե լիակատար կախվածությունը հումքի արտահանումից:

## ԱՄՆ ՀԱԿԱՀՐԹԻՌԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՐԴԱՔԱՐԱՔԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Արտաշես Տեր-Ճարությունյան

Այս տարվա սեպտեմբերի 14-ին Անկարայում Թուրքիայի փոխարտ-գործնախարար Ֆերհիդուն Սինիրլիօղլուն եւ այդ երկրում ԱՄՆ դեսպան Ֆրենսիս Ռիչարդսոնը ստորագրեցին ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի (ՀՀՊ) մասը հանդիսացող ռադիոտեղորոշիչ կայանը (ՈՏԿ) Թուրքիայում տեղակայելու մասին հուշագիր: Ըստ հաղորդագրության, ՈՏԿ-ն տեղակայվելու է Թուրքիայի հարավ-արեւելքում գտնվող Մալաթիա նահանգի Քյուրեջիք շրջանում, իսկ կայանի տեղակայման աշխատանքներն ել ավարտվելու են մինչեւ այս տարվա վերջ:

Թուրքիայում ամերիկյան ՈՏԿ տեղակայումը կարեւորվում է առնվազն երկու առումով:

**Առաջին.** Վաշինգտոնի որոշումը՝ Թուրքիայում ու Եվրոպական երկրներում<sup>1</sup> անցնել ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայմանը, կարեւոր ցուցիչ է Ռուսաստանի հետ նոր հարաբերություններ կառուցելու ԱՄՆ քաղաքականության տեսանկյունից: Հայտնի է, որ իր պաշտոնավարման սկզբնական շրջանում Բարաք Օբաման ձեռնամուխ եղավ Մոսկվայի հետ հարաբերությունների «վերեռնմանը»<sup>2</sup>, որի առանցքային տարրերից մեկը նաև պետք է հանդիսանար ամերիկյան ՀՀՊ համակարգի հետագա ձեւավորման հարցի շուրջ Մոսկվայի ու Վաշինգտոնի միջեւ փոխհամաձայնության ձեռքբերումը: Այդ տեսանկյունից Զեխիայի հրաժարվելը՝ մաս հանդիսանալ ամերիկյան ՀՀՊ համակարգին<sup>3</sup>, դիտորդները գնահատեցին որպես ամերիկա-ռուսական զարգացող փոխըմբռնման վկայություն:

Եվ այժմ, եթե ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայման վերաբերյալ որոշմանը Վաշինգտոնում այլեւս ավարտված են համարում «վերեռնման» փուլը, ապա այն իր ազդեցությունը պետք է քողնի աշխարհաքաղաքական գործընթացների վրա: Այսինքն, ամենայն հավանականությամբ, նորություններ են սպասվում<sup>4</sup>:

**Երկրորդ.** ուշագրավ է, որ Մերձավոր Արեւելքը «ծածկող» ՈՏԿ-ն Վաշինգտոնում որոշեցին տեղակայել հենց Թուրքիայում: Իհարկե,

այդտեղ իր դերը խաղաց Թուրքիայի աշխարհագրական հարմար դիրքը, քանի որ Թյուրքիքում տեղակայվելիք ՈՏԿ-ն կարող է վերահսկել ինչպես իրանական, այնպես էլ Ռուսաստանի հարավային ուղղությունը։ Սակայն ռազմատեխնիկականից զատ, հարցն ունի քաղաքական ասպեկտ։ Փաստ է, որ ԱՄՆ-ը որոշեց իր ազգային անվտանգության համար կարեւոր հարցերից մեկը կապել Թուրքիայի հետ։ Չնայած բազմիցս քննարկվող ամերիկա-թուրքական հակասություններին, Վաշինգտոնում ընտրությունը կրկին կանգ առավ Անկարայի վրա։ Սա, իհարկե, քաղաքական հարաբերությունների վիճակի մասին լուրջ ցուցիչ է, եւ պատահական չէ, որ ներկայում Անկարան իրեն ընդգծված կերպով վստահ է զգում հարակից տարածաշրջաններում։

### Իրավիճակային դիտարկում

Դեռ Սառը պատերազմի տարիներից ամերիկյան ՀՀՊ համակարգի տարրերն առկա են Արեւմտյան Եվրոպայի մի շարք երկրներում։ Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Գրենլանդիայում եւ այլն։ Վաշինգտոնի ծրագրերը՝ ՀՀՊ համակարգի տարրեր տեղակայել Արեւելյան Եվրոպայում, լուրջ անհանգություն են առաջացնում Ռուսաստանում, որովհետեւ այդ տարրերը հնարավորություն են ստանում ֆիքսել ու թուշքի համեմատաբար սկզբնական փուլում ոչնչացնել Ռուսաստանի տարածքից արձակված միջնայրցամաքային հրթիռները։ Թեեւ ԱՄՆ-ն ու իր դաշնակիցները հայտարարում են, որ Եվրոպայում ՀՀՊ համակարգի ընդլայնումը խնդիր ունի մայրցամաքը պաշտպանել իրանական հրթիռներից, որոնք ժամանակի ընթացքում դառնում են ավելի հեռահար<sup>5</sup>, սակայն նույն համակարգը կարող է զսպիչ նշանակություն ունենալ ռուսական ուղղության համար։

Թեեւ դժվար է գնահատական տալ, թե որքան արդյունավետ կարող է գործել ամերիկյան ՀՀՊ համակարգը Եվրոպայում ու հետեւաբար ռազմատեխնիկական առումով ինչ սահմանափակումներ կարող է ստեղծել ռուսական կողմի համար, քանի որ անհայտ է կողմերի կարողությունների մասին տեղեկատվությունը, սակայն կարելի է նկարագրել Արեւելյան Եվրոպայում ԱՄՆ ՀՀՊ համակարգի ընդլայնման աշխարհաքաղաքական հետեւանքները, ինչը, չի բացառվում, որ Վաշինգտոնի համար ներկայում ունի ավելի կարեւոր նշանակություն, քան Ռուսաստանի նկատմամբ ռազմատեխնիկական առավելության ամրապնդումը։

Ինչպես ս.թ. հոկտեմբերի 5-ին հայտարարեց ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը, ամերիկա-ՆԱՏՕ-ական ՀՀՊ համակարգը պատրաստ կլինի արդեն 2018թ. եւ կանցնի մարտական լրիվ հերթապահության: Ռասմուսենի հայտարարությունն առաջին հերթին վերաբերում է Արեւելյան Եվրոպայում ստեղծվող ՀՀՊ համակարգի տարրերին:

Դայտնի է, որ 2008թ. օգոստոսի 20-ին ԱՄՆ-ն ու Լեհաստանը ստորագրեցին պայմանագիր, ըստ որի՝ մինչեւ 2018թ. Լեհաստանի տարածքում՝ Բալթիկ ծովին հարող Սլուտսկ քաղաքի մոտ, նախատեսվում է հիմնել ամերիկյան ռազմակայան, ուր կտեղակայվեն SM-3 տեսակի հրթիռներ, որոնք պետք է ոչնչացնեն թոշող հրթիռները:

Սեպտեմբերի 13-ին ԱՄՆ պետքարտուղար Ջիլարի Քլինթոնը եւ Ռումինիայի արտգործնախարար Տեղող Բակոնսկին ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի՝ մինչեւ 2015թ. Ռումինիայի տարածքում պետք է տեղակայվեն ՈՏԿ եւ SM-3 տեսակի հրթիռներ:

2011թ. հոկտեմբերի 5-ին Բրյուսելում Խապանիայի վարչապետ Խոսե Լուիս Ռոդրիգոս Սապատերոն հայտարարեց, թե իր երկիրը միանում է ամերիկյան ՀՀՊ համակարգին եւ թույլատրում, որ խապանական ռազմածովային ուժերի բազաներում տեղակայվեն SM-3 հրթիռներով զինված ամերիկյան նավերը:

2010թ. փետրվարի 12-ին Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովը հայտարարեց, թե իր երկրի տարածքում կարող են հայտնվել ամերիկյան ՀՀՊ համակարգի տարրերը, եթե դրան իր համաձայնությունը տա Եվրամիությունը: Թեեւ մոտ մեկ շաբաթ անց՝ Բուլղարիայի արտգործնախարար Նիկոլայ Մլադենովը հայտարարեց, որ այդ թեմայի շուրջ բանակցություններ չեն տարվում, սակայն, նախարարը նշեց, թե խոսքը վերաբերում է «ներկա պահին»: Անցած ամիսների ընթացքում միջազգային լրատվամիջոցներում ժամանակ առ ժամանակ հայտնվում էին տեղեկություններ Բուլղարիայում ամերիկյան ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայման մասին, սակայն դրանք պաշտոնական արձագանք չեն ստացել: Պաշտոնական հայտարարություններ չեն հնչել նաեւ Հունգարիայում նշված տարրերի տեղակայման վերաբերյալ, թեեւ այդ երկրի առնչությամբ նույնպես լրատվամիջոցներում երբեմն-երբեմն տեղեկություններ են հայտնվում:

Եթե փորձենք ի մի բերել, ապա ակնհայտ է դառնում, որ ձեւավորվում է պետությունների մի շղթա, որը բաղկացած է ԱՄՆ ՀՀՊ համակարգի մասը հանդիսացող երկրներից, եւ որը ձգվում է Բալթիկ ծովից մինչեւ Սեւ ու

Միջերկրական ծով՝ Լեհաստան-(Յունգարիա)-Ռումինիա-(Բուլղարիա)-Թուրքիա: Անվտանգության ոլորտի ամերիկացի ու Եվրոպացի բազմաթիվ փորձագետներ վերջին շրջանում շատ են խոսում նշված շղթայի մասին՝ որպես ԱՄՆ-ի կողմից իրականացվող աշխարհաքաղաքական մի նոր նախագծի, որի նպատակն է ամրապնդել ամերիկյան ռազմական, հետեւարար՝ քաղաքական ազդեցությունը Եվրոպայի արեւելյան մասում, որը սկսում է ավելի մեծ նշանակություն ձեռք բերել միջազգային հարաբերություններում՝ ռուս-գերմանական խորացող հարաբերությունների ֆոնին:

Որպես նշված նախագծի տարր ներկայացվում է նաև հետեւյալը:

Այս տարրվա փետրվարի 8-ին Շվեդիայի ու Էստոնիայի պաշտպանության նախարարները ստորագրեցին երկու երկրների ռազմական համագործակցության խորացման մասին փաստաթուղթ: Գոյություն ունի Nordic battle group (Սկանդինավյան զորախումբ), որը Եվրամիության անդամ երկրների մասնակցությամբ կազմված 18 զորախմբերից մեկն է, եւ որը բաղկացած է Շվեդիայից, Նորվեգիայից (որը, ինչպես հայտնի է, ՆԱՏՕ անդամ է), Ֆինլանդիայից, Իռլանդիայից եւ Էստոնիայից, եւ որը դեկավարվում է այդ իսկ երկների կողմից՝ ըստ հերթականության: Շվեդա-էստոնական նշված համաձայնագրի ստորագրումից հետո ամերիկյան վերլուծական երկու կենտրոններ գրեցին, թե հնարավոր տարրերակ կարող է ոլիտվել Սկանդինավյան զորախմբին նաև Մեծ Բրիտանիայի, Լատվիայի ու Լիտվայի միանալը, որը միայն կուժեղացնի զորախումբը՝ այն դարձնելով տարածաշրջանային քաղաքական գործոն:

Մայիսի 12-ին Վիշեգրադյան խումբը<sup>6</sup>, որի մեջ մտնում են Լեհաստանը, Յունգարիան, Չեխիան ու Սլովակիան, հայտարարեց, թե մինչեւ 2016թ. ստեղծելու է հատուկ զորախումբ՝ լեհական իրամանատարությամբ, որը չի ենթարկվելու ՆԱՏՕ-ական իրամանատարությանը<sup>7</sup>:

Ի դեպ, այս տարի հունիսի 13-ին ԱՄՆ-ն ու Լեհաստանը ստորագրեցին մի համաձայնագիր, ըստ որի՝ 2013-ից Լեհաստանում ստեղծվելու է ամերիկյան ռազմաօդային ուժերի բազա: Այստեղ ավելացնենք, որ անցած տարի մայիսին հայտնի դարձավ, որ լեհական Մորոնգ քաղաքի մոտ՝ Ռուսաստանի Կալինինգրադի մարզի սահմանից ընդամենը 80 կիլոմետր հեռավորության վրա, տեղակայվել է ամերիկյան Patriot տեսակի հակահրթիռային, հակաօդային պաշտպանության համալիր:

Ամերիկյան փորձագիտական շրջանակները համոզմունք են հայտնում, որ Եվրոպայի արեւելյան հատվածում ընթացող վերոհիշյալ ռազմաքաղաքական զարգացումները հովանավորվում են Վաշինգտոնի կողմից, եւ թէ ՀՀԴ համակարգի տարրերի հայտնվելն արեւելաեվրոպական երկրներում, թէ Սկանդինավյան ու Վիչեգրադյան զորախմբերի շուրջ ընթացող զարգացումները, ինչպես նշեցինք, նպատակ ունեն ամրապնդել ամերիկյան ռազմաքական ու քաղաքական ներկայությունը Եվրոպայի արեւելյան մասում:

Ըստ Էության, նույն տիպի խնդիր է լուծվում նաեւ թուրքական ուղղությամբ: Ամերիկյան ՀՀԴ համակարգի տարրի տեղակայումը Թուրքիայում<sup>8</sup> մեծացնում է այդ երկրի քաղաքական կշիռը տարածաշրջանում: Մյուս կողմից, այն վկայում է Վաշինգտոնի շահագրգուզածության մասին՝ Անկարայի հետ ռազմաքաղաքական կապերը պահել որոշակի՝ ռազմավարական մակարդակի:

<sup>1</sup> Այս տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին միանգամից երեք երկիր՝ Ռումինիան, Թուրքիան ու Իսպանիան, հայտարարեցին, թէ միանում են ԱՄՆ ՀՀԴ համակարգին:

<sup>2</sup> 2009թ. Քետրվարի 7-ին՝ Բարաք Օբամայի կողմից ԱՄՆ նախագահի պաշտոնը ստանձնելուց մոտ երկուսուկես շաբաթ անց, Միացյալ Նահանգների փոխնախագահ Զո Բայդենը հայտարարեց Մոսկվայի հետ հարաբերություններում «վերբեռնման կոճակը սեղմելու» անհրաժեշտության մասին: Մեկ ամիս անց՝ մարտի 6-ին, ժնեւում ԱՄՆ պետքարտուղար Ջիլարի Քլինթոնը Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովին փոխանցեց մի տուփ, որի վրա ամրացված էր կոճակ եւ գրված էին «reset» եւ «ուղարկա» բառերը: Տուփը պետք է խորհրդանշեր ամերիկա-ռուսական հարաբերությունների «վերբեռնումը»:

<sup>3</sup> Այս տարվա հունիսի 15-ին Չեխիայի պաշտպանության նախարար Ալեքսանդր Վոնդրան հայտարարեց, թէ իր երկիրը հրաժարվել է մասնակցել Միացյալ Նահանգների ՀՀԴ համակարգի ստեղծմանը: Յիշեցնենք, որ դեռ 2006-ից Լեհաստանի հետ միասին Չեխիան նշվում էր որպես Արևելյան Եվրոպայում Միացյալ Նահանգների ՀՀԴ տարրերի տեղակայման վայր, ուր պետք է տեղադրվեր ամերիկյան Raytheon ընկերության X-Band Radar տեսակի ՈՏԿ:

<sup>4</sup> Միգուցե նաեւ այս տեսանկյունից պետք է դիտարկել Մոսկվայում կայացրած որոշումը՝ Պուտինի մեջ քաղաքականություն վերադառնալու վերաբերյալ:

5 Դեռ 2007թ. նոյեմբերից իրանում մարտական հերթապահության են անցել «Աշուրա» անվամբ հրթիռները, որոնց հեռահարությունը գնահատվում է մինչեւ 2 500 կիլոմետր:

6 Խումբը ստեղծվել է 1991թ. Հունգարիայի Վիշեգրադ քաղաքում:

7 Նշենք, որ բոլոր չորս պետություններն ել ՆԱՏՕ անդամ են:

8 ԱՄՍ ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայումը Թուրքիայում նորություն չէ: Դեռ 1972թ. Դիարբեքիր քաղաքի մոտ՝ Փիրինչլիք ավիաբազայում տեղակայվեց ամերիկյան ՈՏԿ, որը «ծածկում» էր ԽՍՀՄ կովկասյան շրջանը, իյուսիսային Ղազախստանը, ինչպես նաև Մերձավոր Կրեւելը: Կայանը գործում էր 4 300 կիլոմետր շառավղով: 1997թ. ԱՄՆ-ը հրաժարվեց Փիրինչլիքի ՈՏԿ ծառայություններից եւ կայանը հանձնեց Թուրքիային:

## ՍԻՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

### Արաքս Փաշայան

Իրադրությունը Սիրիայում շարունակում է մնալ բավական լարված: Իշխանությունների եւ ընդդիմադիրների միջեւ զինված բախումները, հակակառավարական ելույթները չեն հանդարտվում: Սիրիական անվտանգությունն ու հատուկ ծառայությունները թե՛ Սիրիայում, թե՛ Սիրիայի սահմաններից դուրս շարունակում են հետապնդել ու պատժել ընդդիմադիրներին ու նրանց մերձավորներին, բայց ամենից առաջ՝ դասալիքներին (որոնց շրջանում կան նաեւ առանձին բարձրաստիճան զինվորականներ): Ասվածի ապացույցը սիրիական բանակի վերջին շրջանի ռազմական գործողություններն են հարեւան Լիբանանում: Սիեւնույն ժամանակ պետք է նկատել, որ հակակառավարական ելույթները Սիրիայում այդքան էլ զանգվածային բնույթ չեն կրում, ինչպես ներկայացնում են միջազգային մի շարք լրատվամիջոցները: Նշանակալից են ուրբաթօրյա աղոթքից հետո տեղի ունեցող ցույցերը: Իրավիճակը մայրաքաղաք Դամասկոսում եւ Յալեպում շարունակում է մնալ զգալիորեն կայուն:

Չնայած իշխող վարչակարգը Սիրիայում, օգտագործելով կոշտ մեթոդներ, շարունակում է վերահսկել իրավիճակը՝ հընթաց առաջ քաշելով բարեփոխումների նորանոր ծրագրեր, ինչպես, օրինակ, նոր սահմանադրության մշակումը, սակայն հասարակության մեջ առկա երկիրեղկվածությունն ու լարվածությունը չեն նպաստում ներքաղաքական իրադրության կայունացմանը: Յակակառավարական ելույթներն, ըստ էության, չեն հանդարտվում ոչ թե այն պատճառով, որ իշխանությունները չեն ցանկանում իրականացնել բարեփոխումներ, այլ՝ որովհետեւ դրանք ուշացած են:

Մյուս կողմից, ներքաղաքական զարգացումների վրա արտաքին գործոնի ազդեցությունը զգալիորեն արմատականացրել է ընդդիմադիրների դիրքերը, որոնց պայքարը ստացել է զինված բնույթ: Այս իմաստով, լիբիական եւ սիրիական գործընթացների միջեւ զգալի ընդհանրություններ կան: Սիրիայում նույնպես ընդդիմադիրները զինված են: Դա է պատճառը, որ սիրիական զինված ուժերի շրջանում զգալի թվով զոհվածներ եւ վիրավորներ կան: Սակայն, ի տարբերություն լիբիայի, որտեղ իշխանափոխությունը տեղի ունեցավ ոչ այնքան ընդդիմադիրների

պայքարի, որքան ՆԱՏՕ ռազմական գործողությունների շնորհիվ, Սիրիայի դեպքում շարունակում են հանգուցային մնալ Ռուսաստանի Դաշնության եւ Չինաստանի մոտեցումները: Հենց այս երկրներն են ՄԱԿ ԱԽ-ում օգտագործում վետոյի իրենց իրավունքը (ինչպես դա եղավ ս.թ. հոկտեմբերի սկզբին)` կասեցնելով Սիրիայում արտաքին միջամտության ուղղակի հնարավորությունը, որի միջոցով թերեւս հնարավոր կլինի հասնել Բաշար ալ-Ասադի վարչակարգի հեռացմանը: Նման մոտեցումը փաստարկվում է լիբիական նախադեպից խուսափելու անհրաժեշտությամբ, համարելով, որ Սիրիայում իշխանությունների եւ ընդդիմության միջեւ երկխոսության հնարավորությունը չի սպառվել:

Զուգահեռաբար, միջազգային հանրությունը շարունակում է Սիրիայի դեմ իրականացնել տարաբնույթ պատժամիջոցներ՝ պահանջելով Բաշար ալ-Ասադի անհապաղ հրաժարականը: Սիրիայի դեմ ճնշումներ եւ քարոզչություն իրականացվում են ոչ միայն ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, այլեւ՝ արաբական աշխարհի, մասնավորապես՝ Պարսից ծոցի միապետությունների կողմից: Ասվածի ապացույցը հոկտեմբերի 16-ին Կահիրենում Արաբական պետությունների լիգայի արտաքին գործերի նախարարների՝ Սիրիային նվիրված հանդիպումն էր, որը նպատակ ուներ լրացնուցիչ ճնշում գործադրել իշխող վարչակարգի վրա: «Ալ-Սիրամ» թերթի հաղորդմամբ՝ ԱՊԼ անդամները հնարավոր էին համարում Սիրիային կազմակերպությունից հեռացնելու, ինչպես նաև Ստամբուլում ստեղծված Սիրիայի Ազգային խորհուրդը (ԱԽ) լեգիտիմ իշխանություն ճանաչելու հնարավորությունը՝ բացառելով օտար ուժերի միջամտությունն այդ երկրում:

Սակայն ԱՊԼ-ն դեռեւս ձեռնպահ մնաց արմատական քայլերից՝ առաջարկելով իր միջնորդությունն իշխանության եւ ընդդիմության միջեւ բանակցություններում, ինչը պաշտոնական Դամասկոսն արդեն մերժել է՝ պատճառաբանելով, որ ի վիճակի է զբաղվել իր երկրի ներքին գործերով: Սիրիայի նկատմամբ ԱՊԼ նման մոտեցումը միանգամայն հասկանալի է եւ պայմանավորված է Ծոցի երկրների դիրքորոշմամբ:

Խնդիրն այն է, որ Սիրիայի ներքաղաքական զարգացումների վրա շոշափելի ացդեցություն ունեն մասնավորապես Սառույան Արաբիան եւ Կատարը, որոնք ցանկանում են Սիրիայում իրանամետ ալավիական վարչակարգի տապալմանը թուլացնել իրանի դիրքերը: Մինչդեռ Սիրիան տարածաշրջանում իրանի միակ լուրջ դաշնակիցն է, եւ Թեհրանը զգուշանում է այդ երկրում սուլանիների հնարավոր իշխանության գալու հանգամանքից, որի դեպքում կկորցնի Մերձավոր Արեւելքում ունեցած իր կարեւոր հենակետերից մեկը: Սիրիան թերեւս ամենակարեւոր օղակն է

Իրան–«Յիզբալլահ» շղթայում: Այդ իսկ պատճառով Իրանը փորձում է անել հնարավորը՝ կանխելու ոչ միայն Ծոցի երկրների, այլև՝ Թուրքիայի միջամտությունը ներսիրիական զարգացումներում: Ընդհանրապես, Իրանն ակտիվորեն օգտագործում է շիայական գործոնն արաբական այն երկրներում, որոնք ունեն շիա բնակչություն (Իրաք, Լիբանան, Սաուդյան Արաբիա, Մարոկո եւ այլն):

Այս իմաստով Սիրիան կարելի է համարել շիա-սուննի հակամարտության հերթական մի դաշտ: «Արաբական գարնան» շրջանակներում կողմերի միջեւ առաջին մրցակցությունը ծավալվեց մեծամասնությամբ շիա բնակչություն, սակայն սուննի ընտրանի ունեցող Բահրեյնում, որտեղ իշխանափոխությունը հնարավոր եղավ կանխել միայն այն ժամանակ, երբ Սաուդյան Արաբիան այդ երկիր գործ մտցրեց՝ պաշտպանելու իշխող Ալ Խալիֆա ընտանիքին: Իրանի եւ Սաուդյան Արաբիայի միջեւ մրցակցության ոչ պակաս կարեւոր ասպարեզներից են նաեւ Իրաքն ու Լիբանանը, որոնք պարբերաբար գտնվում են ներքաղաքական անկայունության մեջ:

Ինչպես նշեցինք, սիրիական վարչակարգի ամենակոշտ ընդդիմադիրներից է նաեւ Թուրքիայի իշխող վերնախավը, որը պատրաստ է միակողմանի պատժամիջոցներ կիրառել Դամասկոսի նկատմամբ: Նախկինում Բաշար ալ-Ասադի վարչակարգի հետ բացառիկ զերմ հարաբերություններ ունեցող Թուրքիայի իշխանությունները, ի դեմս Արդարություն եւ զարգացում կուսակցության, այսօր դարձել են արտերկրուտ գործող սիրիական ընդդիմության փաստացի հովանավորը: Քենց Ստամբուլում ս.թ. հոկտեմբերի 2-ին ձեւավորվեց Սիրիայի Ազգային խորհուրդը՝ որպես ընդդիմադիր դաշտի գործադիր եւ կոորդինացնող մարմին:

Առանձին տեղեկությունների համաձայն՝ թուրքական Միթ-ը եւ զինվորական հետախուզությունն ակտիվ աշխատանք են տանում Ազատ սիրիական բանակի եւ Սիրիայի ազատ սպաների խմբերին մարզելու եւ զինելու ուղղությամբ՝ ձգտելով դրանք դարձնել Սիրիայում ներկա եւ ապագա պարտիզանական պայքարի հենակետեր: Չնայած Անկարան նշում է, որ շահագրգռված է Սիրիայում կայունության հաստատմամբ, քանի որ մտավախություն ունի՝ կապված քրդական գործոնի ակտիվացման հետ, սակայն, որոշ տվյալների համաձայն, Թուրքիան, որն իր երկրում խեղդում է քրդական շարժումները, ակտիվացնում է նույն քրդական գործոնը Սիրիայի տարածքում: Այդ իմաստով, ամենեւին պատահական չէր հայտնի քուրդ ընդդիմադիր Մաշալ Թամոյի սպանությունը, ինչն էլ ավելի ապակյայունացրեց իրավիճակը Սիրիայի քրդական շրջաններում: Իր հերթին Դամասկոսը նույնպես օգտագործում է

քրդական գործոնը Թուրքիայի դեմ, ինչպես օգտագործել է տասնամյակներ շարունակ Հաֆեզ ալ-Ասադի օրոք՝ ձգտելով կարգավորել իր երկրի համար կարեւորագույն նշանակություն ունեցող ջրի խնդիրը:

Իրականում, Սիրիայի ներքին գործերին միջամտելով՝ Թուրքիան նպատակ ունի ակտիվացնել արտաքին քաղաքականության մերձավորարեւելյան ուղղությունը: Թուրքիան ներկայումս դարձել է մի տեսակ հենարան արաբական հասարակական-քաղաքական ընդդիմադիրների համար, ինչը, բնականաբար, նպատակ ունի ընդլայնել տարածաշրջանում Թուրքիայի հարածուն հեղինակությունն ու ազդեցությունը:

Ստեղծված իրողությունների համատեքստում, թե՛ Սիրիայի իշխող վարչակարգը, թե՛ ընդդիմությունը շարունակելու են գործել՝ հենվելով հովանավոր կողմերի վրա: Սակայն կասկածից վեր է, որ արտաքին դերակատարների բացակայության դեպքում սիրիական ընդդիմությունը երկրում տեւականորեն գործելու հնարավորություն չէր ունենա: Բազմաշերտ ու բազմաբովանդակ գաղափարախոսություններ դավանող սիրիական ընդդիմադիր դաշտի գործողություններին այսօր հետեւում է միջազգային հանրությունը: Ընդդիմության հիմնական կենտրոնները Ստամբուլում եւ Փարիզում են, չնայած Սիրիայում նույնպես կան առանձին տեղական կառույցներ:

Վերջին շրջանում ավելի շատ է խոսվում սիրիական առանձին քաղաքական ուժերից կազմված եւ մոտ երկու հարյուր անդամ ունեցող Ազգային խորհրդի մասին: Կառույցի դեկավարն աշխարհիկ գործչի համարում ունեցող ֆրանսահպատակ Բուրիհան Ղալյունն Է՝ Սորբոնի համալսարանի պրոֆեսոր: Աև-ը մոտ երեք տասնյակ անդամ ունեցող գործադիր մարմին ունի, որում ներառված են թե աշխարհիկ-լիբերալ, թե՛ կրոնաքաղաքական գործիչներ, որոնց մեջ կան նաև էթնիկ ու դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Հատկանշական է, որ «Մուսուլման եղբայրները» Աև գործադիր մարմնում ունեն ընդհամենը հինգ անդամ: Ի դեպ, Աև մաս չի կազմում սիրիացի մի շարք հայտնի մտավորականների (Արեք Դալիլ, Յասան Աբդ ալ-Ազեմ, Միշել Քիլո, Ֆայեզ Սարա եւ այլք) կողմից ստեղծված եւ լիբերալ դիրքերում կանգնած Համուն ժողովրդավարական բարեփոխումների ազգային կոորդինացման կոմիտեն, որի տեսակետները մի շարք հարցերում տարբեր են Աև մոտեցումներից: Նշված կառույցը, պահանջելով ալ-Ասադի վարչակարգի հրաժարականը, համարում է, որ իշխանությունների հետ երկխոսությունը սպառված չէ, եթե վերջիններս հրաժարվեն բռնություններից: Սակայն կոմիտեն դեմ է Սիրիայում արտաքին միջամտությանը, բնականաբար՝ անընդունելի համարելով

լիրիական սցենարը: Միեւնույն ժամանակ, ժողովրդավարական բարեփոխումների կողմնակիցները ԱԽ գոյությունը ողջունել են՝ կոչ անելով նրանց ավելի բաց լինել բազմակարծության առաջ:

Մինչդեռ ԱԽ-ը կողմ է վարչակարգը հեռացնելու ցանկացած մեթոդի: Խնդիրն այն է, որ եթե ԱԽ-ը հրաժարվի զինված պայքարից, ապա, ըստ ամենայնի, կկորցնի բազմաթիվ համախոհների: Իսկ զինված պայքարի շարունականություն՝ նշանակում է Սիրիայում արտաքին միջամտության հետագա ընդլայնում: Թե որքան համախոհներ ունի ընդդիմադիր կառուցմերից յուրաքանչյուրը Սիրիայում եւ սիրիական սփյուռքում, դժվար է ասել, իսկ թե որքանով է հնարավոր ապագայում նրանց բոլորի համախմբումը, ցույց կտա ժամանակը: Սակայն պաշտոնական Դամասկոսն արդեն իսկ հայտարարել է, որ ԱԽ միջազգային ճանաչման դեպքում համարժեք քայլեր կծննարկի:

Սիրիական ընդդիմության գործողությունների մի քանի սցենարներ են առաջ քաշել գերմանացի վերլուծաբանները: Առաջինը, որ ննան է Եգիպտական սցենարին, զինված հեղաշրջումն է, որի մեջ պետք է ներգրավված լինեն ալավիական բարձրաստիճան սպաներ՝ դա համարելով քաղաքական ճգնաժամից դուրս գալու ելք: Սակայն այդ դեպքում ընդդիմությունը պետք է երաշխավորի ալավի փոքրամասնության անվտանգությունը, իսկ բանակը պետք է դառնա հասարակական կարգի եւ քաղաքական ազատությունների երաշխավոր: Երկրորդ սցենարը տոտալ քաղաքացիական ընդվզումն է, ինչն, ըստ ամենայնի, կիանդիակի բանակի դիմադրությանը եւ շատ զոհեր կպահանջի: Երրորդ սցենարը կապված է սիրիական սփյուռքի ընդդիմադիր շրջանակների ակտիվացման հետ, ինչը, ըստ դիտարկման, այնքան էլ իրատեսական չէ՝ հաշվի առնելով սիրիական սփյուռքի բազմաշերտությունը:

Այսպիսով, Սիրիայի ներքաղաքական իրավիճակի փոփոխությունը, ըստ ամենայնի, կախված է արտաքին գործոնների ազդեցությունից: Սիրիայի հարցում միջազգային ճնշումները ներկա փուլում թեւ չեն կարող արմատական բեկում մտցնել այդ երկրի ներքաղաքական կյանքում կամ էլ հանգեցնել Բաշար ալ-Ասադի վարչակարգի տապալմանը, սակայն ներքաղաքական անկայունության շարունակականությունը, բնականաբար, կարող է նպաստել ճգնաժամի ընդլայնմանը եւ Սիրիայի շուրջ միջազգային լարվածության խորացմանը: Փորձագիտական շրջանակները շատ են խոսում Սիրիայում լիբանանյան սցենարով քաղաքացիական պատերազմի հավանականության մասին: Խնդիրն այն է, որ թե՛ Սիրիան, թե՛ Լիբանանը էթնիկ եւ դավանական բարդ խճանկար ունեցող երկրներ են: Իսկ քաղաքացիական պատերազմը Սիրիայում

կիանգեցնի միջամայնքային ներդաշնակության աղճատմանը եւ ներքաղաքական անհաղթահարելի ճգնաժամի: Չի բացառվում, որ ներկա փուլում քաղաքական դաշտում ոչ ամենաակտիվ ուժերից մեկը՝ «Մուսուլման եղբայրները», կարողանա առաջնահերթություն ձեռք բերել հետագա գործընթացներում՝ փորձ անելով փոխել երկրի աշխարհիկ բնույթը: Պատահական չէ, որ Սիրիայում իշխանափոխությունից որոշակիորեն զգուշանում է Իսրայելը՝ մտավախություն ունենալով իսլամիստների (չափավոր թե՛ ծայրահեղական) իշխանության գալու հեռանկարից:

Ի վերջո, Եգիպտոսում, Թունիսում եւ Լիբիայում այսօր իրավիճակն ամենեւին էլ այնպիսին չէ, ինչի մասին երազում էին հեղափոխության մասնակիցները: Նմանատիպ իրավիճակ կարող է սպասվել նաեւ Սիրիային, որտեղ թեկուզ ոչ իշխանափոխությունը, սակայն տեւական անկայունությունը կարող է խարիսկել պետության հիմքերը՝ նպաստելով հասարակության բոլոր շերտերի դժգոհությանը: Փոխարենը, Մերձավոր Արեւելքի ամենահանգուցային երկրներից մեկում՝ Սիրիայում (որն ավանդականորեն համարվում է տարածաշրջանի անվտանգության երաշխավորներից մեկը) տեղի ունեցող գործընթացներից կարող են շահել միջազգային եւ տարածաշրջանային այն ուժերը, որոնք շահագրգռված են ոչ միայն առանձին ուժային կենտրոնների թուլացմանը, այլեւ ձգտում են Սիրին Արեւելքում ստեղծել աշխարհաքաղաքական նոր իրադրություն:

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՌԻԹՅԱՆ ՀԵՇԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՋ

### Սուրեն Սարյան

Վերջին տարիներին աշխարհը համակած տնտեսական ճգնաժամն էապես հարվածեց նաեւ Եվրոպական միուրյան ներուժին: Այսօր ամերիկյան գլոբալ առաջնորդությունը փաստացի անգործության է մատնել Եվրոպայի ռազմավարական միտքը: Եվրոպացիների մեծ մասը ներկայում չգիտի, թե որտեղ է վերջանում իր պետության սահմանը, եւ որտեղ են սկսվում Եվրոպական ինստիտուտները: Աշխարհում եւ Եվրոպայում տարածում են գտնում Ասիայի վերելքի եւ արեւելյան մրցակիցների աճի ու միաժամանակ Եվրոպայի թուլացման մասին կարծրատիպերը:

Պետք է ասել, որ Եվրոպական ինտեգրումը զգալիորեն ուժեղացրեց աշխարհամասի երկրների տնտեսական ներուժը: Նաեւ բարձրացավ կյանքի որակը, թեւ ոչ հավասարաչափ: Եվ, ամենակարեւորը, ԵՄ նախագիծը փայլուն կերպով կատարեց այն խնդիրը, որը նպատակադրված էր դրա հիմքում. ԵՄ տարածքում գործնականորեն բացառված են պատրազմները:

Այդուհանդերձ, փորձագետները նշում են, որ վերջին ժամանակաշրջանում միջազգային հարաբերությունների համակարգ վերադարձավ ուժի գործոնը, որը հակասում է ԵՄ սկզբունքներին եւ ինքնությանը, որոնք կառուցվում էին Եվրոպական ռազմականացված մտածողության ավանդույթները հաղթահարելու հիմքի վրա:

Ներկայում ԵՄ-ը գրավիչ է հարեւան գրեթե բոլոր պետությունների համար, որոնք ծգտում են դառնալ նրա անդամ, բացառությամբ, թերեւս, Ռուսաստանի: Իսկ այն երկրները, որոնք Եվրոպական ինտեգրման հոլյսեր չունեն, գտնվելով Աֆրիկայում, Մերձավոր Արեւելքում կամ Ասիայում, ընտրել են անհատական «ինտեգրման» ուղին՝ իրենց քաղաքացիների ներգաղթի միջոցով, ինչն արդեն դարձել է Եվրոպայի համար լրջագույն հայեցակարգային խնդիր:

Այսօր էլ ԵՄ-ը որեւէ կերպ չի դադարում լինել տնտեսական հսկա, իսկ Շունաստանում կամ Պորտուգալիայում կենսանակարդակը մնում է ավելի բարձր, քան Միուրյան սահմաններից արեւելք կամ հարավ ընկած երկրներում: ԵՄ-ին անդամակցելու հերթ կանգնածների թիվը չի պակասում: Եվրոպական ինստիտուտների որակն այնքան բարձր է, որ

ընթացիկ խնդիրները կարգավորվում են պետական մեքենայի կողմից արդյունավետորեն, ինչպես, օրինակ, Բելգիայի դեպքում, որտեղ արդեն երկրորդ տարին չի ձեւավորվում կառավարություն, սակայն կյանքը շարունակում է բնականոն ընթանալ:

Ակնհայտ է, որ իր ծավալների եւ տնտեսական հզորության շնորհիվ ԵՄ-ը պարզապես չի կարող չլինել գլոբալ քաղաքականության ազդեցիկ դերակատար: Մյուս կողմից, այդ գլոբալ քաղաքականությունը թույլ չի տալիս Եվրոպային ինքնամփոփվել՝ անընդհատ մարտահրավերներ նետելով նրան:

Փորձագետների կարծիքով, իր աշխարհաքաղաքական ինքնության ընդլայնման համար Եվրոպային անհրաժեշտ է ինտեգրման նոր որակների զարգացում, որը ենթադրում է ազգային ինքնիշխանությունների միավորում մեկ ընդհանուրի մեջ: Սակայն դա տեղի չի ունենում, քանի որ Եվրոպական ազգերը դրան դեռ պատրաստ չեն: Աճող փոխկախվածությունը տնտեսական ոլորտում եւ շուկաների ու տարադրամների վերագգային բնույթը չեն ուղեկցվում քաղաքականության միասնականացման նմանատիպ ընթացքով: Փորձագետները նշում են, որ ընդլայնվելով՝ ԵՄ-ը մոռացավ կապերի խորացման մասին, ինչը կկանխեր շատ փակուղային իրավիճակների ստեղծումը:

Փորձը ցույց է տալիս, որ Եվրոպական ինտեգրման ընթացքն արգելակվում է, երբ բացակայում են խոշոր նախագծեր, որոնց դերում հանդես եկան մաքսային միությունը, ընդհանուր շուկան, Եվրոպական տարադրամը, ԵՄ ընդլայնումը: Որոշ փորձագետներ համարում են, որ այժմ նման նախագիծ կարող է դառնալ Ռուսաստանի ներգրավումը Եվրոպական միության մեջ, ինչը կտա միությանը գլոբալ ուժային կենտրոն դառնալու հնարավորություն, իսկ Ռուսաստանին՝ նոր մարտահրավերներին դիմագրավելու կարողություններ, քանզի ակնհայտ է, որ ներկայիս զարգացման միտումների պահպանման պարագայում, առաջին հերթին՝ տնտեսական եւ ժողովրդագրական առումներով, Ռուսաստանը մի քանի տարուց պարզապես չի կարողանալու առանց ԵՄ-ի հետ ինտեգրման ապահովել իր ուժային կենտրոնի դերակատարությունը:

Իրականում ԵՄ ճգնաժամը լիդերության, իրավիճակի երկարաժամկետ տեսլականի բացակայության ճգնաժամ է: Նշված հայեցակարգային ճգնաժամի պատճառ շատերը համարում են այն, որ այսօր Եվրոպական կառավարություններն ու առաջնորդները զբաղված են օրվա խնդիրների լուծմամբ՝ մտահոգվելով գուտ ընտրություններում ընտրագանգվածին իրենց կողմը քաշելու հարցերով: Մինչդեռ ռազմավարությունը բացակայում է:

Իրոք, առանցքային եվրոպական պետությունները պահում են ԵՄ-ին անորոշության վիճակում: Միության բացահայտ առաջնորդ հանդիսացող Գերմանիան այդպես էլ չի կարողանում կողմնորոշվել իր հետագա դերակատարության հարցում:

Ըստ Էւլիյան, մոտակա տարիներին ԵՄ ինտեգրացիոն գործընթացներն ուղղված են լինելու միության ներսում դաշնային հարաբերությունների ձեւավորմանը, ինչպես նաև միասնական տնտեսական, իրավական ու աշխարհաքաղաքական տարածության մեջ Արեւելյան Եվրոպայի (Բալկանների եւ «Արեւելյան գործընկերության» անդամ Երկրների) եւ Ռուսաստանի ներգրավմանը: Առանց այդ զարգացումների Եվրոպական նախագիծը փաստորեն մնում է անավարտ:

Սակայն այստեղ էլ ԵՄ առաջատարները բախվում են միասնական ռազմավարության բացակայության փաստին: Ազգային պարտքերով պայմանավորված ճգնաժանը բերեց նրան, որ Եվրոպայում առաջատար դեր սկսեց կատարել առավել նվազ ազգային պարտք ունեցող պետությունը՝ Գերմանիան: Չենց Գերմանիան է դարձել Եվրոպական Երկրների համար արդիական տեխնոլոգիաների եւ ֆինանսական ռեսուլսների մատակարարը. այսօր Բեռլինը ձեւավորում է Եվրոպական ապրանքային շուկան եւ թելադրում գները: Ակնհայտ է, որ Գերմանիան գրավը դրել է Արեւելյան Եվրոպայի Երկրների տնտեսությունների եւ հասարակությունների «գերմանացման» վրա, երբ քայլ առ քայլ գերմանական տնտեսական զարգացման ու քաղաքացիական հասարակության մոդելները կդառնան կիրառելի վերոնշյալ Երկրներում:

Միենանույն ժամանակ, Գերմանիան պնդում է, որ իրեն վերաբերվեն որպես նորմալ (առանց գլոբալ հավակնությունների) տերության, սակայն ինքը՝ Գերմանիան, երբեւ չի կարող լինել սովորական տերություն: Այն չափազանց հզոր է դրա համար, քանի որ նրա տնտեսությունը երկու անգամ ավելի մեծ է, քան բրիտանականը կամ ֆրանսիականը: Այդ պատճառով Գերմանիան կարող է լինել առավելապես առաջնորդող տերություն: Եվ Բեռլինը ստիպված է փրկել Եվրոյի գոտին, քանի որ այն սպասարկում է հենց գերմանական արտահանումը: Այնպես որ, այստեղ Բեռլինի կողմից որեւէ բարեգործական քայլ չի կատարվում. սա զուտ պրագմատիկ հաշվարկ է: Սակայն Գերմանիան շարունակում է տարբեր առիթներ փնտրել՝ միջազգային քաղաքականության մեջ իր ակտիվ չներգրավվածությունը պատճառաբանելու համար՝ ռիսկերը բարդելով դաշնակիցների ուսերի վրա:

Ուստի, Գերմանիան ինչքան էլ առանցք լինի, իրականում Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան են մնում Եվրոպայի համաշխարհային

տերության կարգավիճակ ունեցող երկրները: Թեպետեւ Եվրոպական պետությունների համընդհանուր ՀՆԱ-ն գերազանցում է ԱՄՆ ՀՆԱ-ն, սակայն ՆԱՏՕ Եվրոպական անդամների պաշտպանական բյուջեն կազմում է ընդամենը շուրջ 200 մլրդ Եվրո՝ ԱՄՆ 700 մլրդ Եվրո կազմող ռազմական ծախսերի համեմատ: Եվ Եվրոպական երկրների ռազմական ծախսերի 43%-ն ընկնում է Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի վրա: Այս առումով բնական էր, որ նրանք երկուսով ձեւավորելու են Եվրոպայի գլոբալ ռազմավարությունը:

2010թ. նոյեմբերին Լոնդոնն ու Փարիզը ստորագրեցին պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում համագործակցության մասին պայմանագիր: Դրան նպաստեցին այն գործոնները, որ ԱՄՆ-ը, որին Լոնդոնն անվերապահորեն հետեւում էր վերջին տասնամյակում, այսօր այնքան էլ հակված չէ շարունակել «հատուկ հարաբերությունների» ուղեգիծը, որը տարվում էր երկու անգլոսաքսոնական տերությունների միջեւ, իսկ Փարիզը չկարողացավ պաշտպանական դաշինք ստեղծել Գերմանիայի հետ, որի հայացքն ուղղված է մեծ մասամբ խաղաղասիրական նախաձեռնություններին եւ իր եսասիրական, գերազանցապես՝ տնտեսական խնդիրներին, ինչպես նաև Ռուսաստանի հետ եներգետիկ համագործակցության զարգացմանը: Ֆրանկո-բրիտանական դաշինքի առաջին փորձարկումը դարձավ ՆԱՏՕ պատերազմը Լիբիայում: Փաստորեն, այդ դաշինքը կենտրոնանալու է Միջերկրածովյան ավազանի եւ Ղնդկական օվկիանոսի ավազանի տարածաշրջաններում ընթացող զարգացումների վրա, իսկ Գերմանիան ու Լեհաստանը՝ Եվրոպայի արեւելքի ուղղությամբ: Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան հասկանում են, որ նրանք մտել են իրենց աշխարհաքաղաքական եւ տնտեսական հզորության անկնան փուլ եւ այժմ փորձում են կամք ցուցաբարել՝ այդ անկնանը դիմակայելու համար:

Կարելի է ասել, որ ԵՄ շարժիչ ուժը՝ ֆրանկո-գերմանական տանդեմը, վերջին զարգացումների ընթացքում թուլացավ: Այդ պատճառով կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներին վախեցնում է ռուս-գերմանական սեպարատ գործարքի ուրվականը, ինչպես դա մի քանի անգամ տեղի է ունեցել անցյալում: Այդ է պատճառը, որ այդ երկրներն ապավինում են ԱՄՆ-ին եւ ՆԱՏՕ-ին:

Քարկ է նաեւ վերիիշել, որ տասնամյակներ շարունակ ԵՄ-ն իրագործում էր իր ինտեգրումն «ավագ Եղբոր»՝ ԱՄՆ անվտանգության վահանի պաշտպանության ներքո: Սակայն իինա ԱՄՆ ուշադրությունը հետզհետեւ սեւերվում է այլ տարածաշրջանների վրա: Մինչեւ 1990-ականները ԱՄՆ-ը պաշտպանում էր Եվրոպային, ինչի արդյունքում ԵՄ-ը

մինչ օրս ունակ չէ զբաղվել գլոբալ օրակարգի հարցերով։ Այսինքն՝ ԵՄ-ն այսօր ներկա է գլոբալ ասպարեզում, սակայն ի վիճակի չէ իր այդ ներկայությունը վերածել իրական ուժային կենտրոնի տեսքի։ Իսկ ԱՄՆ-ն ուրվագծում է իր ներկայությունը Արեւելյան Եվրոպայում առավելապես ռազմաքաղաքական ոլորտում, ինչպես, օրինակ, Լեհաստանին սպառագինությունների մատակարարման կամ Ռումինիայում հակահրթիռային պաշտպանության կայանի տեղակայման քայլերի տեսքով։

Փորձագետներն արդեն փաստում են, որ XXI դարում աշխարհում խաղի կանոնները թելադրելու են ԱՄՆ ու ՉԺՀ-ն, սակայն ոչ՝ ԵՄ-ը։ ԵՄ-ը պետք է ընտրի՝ կամ շարունակել մնալ ԱՄՆ հովանու ներքո, կամ էլ գնալ Չինաստանի հետ հարաբերությունների նոր որակի կառուցման։

Այսօր Եվրոպական քաղաքական դասը կանգնած է, ըստ Էռլյան, պատմական որոշման առջեւ։ կամ Վերջ դնել Եվրոյին, Եվրոյի գոտուն, կամ գնալ միասնական ֆինանսական քաղաքականության, ինչն իրականում նշանակում է ստեղծել դաշնային Եվրոպական պետություն։ Այսպես, այս տարվա օգոստոսին Ն.Սարկոզին ու Ա.Մերկելն առաջարկեցին մի ծրագիր, համաձայն որի՝ ԵՄ-ը տեսականորեն հնարավորություն ստացավ Եվրոյի գոտուց կամ նույնիսկ միությունից վտարել «կարգազանցներին»։ Այսինքն՝ ինտեգրմանը զուգահեռ՝ ԵՄ-ում արագանում են ապահովեգորացման գործընթացները, ավելի ճշշտ՝ «հատվածայնացման» պրոցեսները Եվրոպական նախագիծը դարձնում են մի քանի արագությունների Եվրոպա։

Դրա լավագույն օրինակը Եվրոպայի հարավում ծավալվող զարգացումներն են։ Հունաստանն իր ներկայիս 143%-անոց ազգային պարտքով գնում է դեպի սնանկացում, «հերթագործած» են նաև Իտալիան, Իսպանիան ու Պորտուգալիան։ Սակայն քիչ հավանական է, որ Գերմանիան ու Ֆրանսիան իրաժարվեն Եվրոյից, քանի դեռ Եվրոյին աջակցելու գինը չի գերազանցել դրանից իրաժարվելու գինը։ Մյուս կողմից, եթե հարավեվրոպական պետությունների սնանկացման պատճառով նրանք գնան միասնական ֆինանսական քաղաքականության հաստատման, ապա Եվրոյի գոտու մեջ չմտնող բոլոր պետությունները՝ Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ, կարող են պարզապես լրել միությունը, քանի որ Լոնդոնը երբեք չի ընդունի Եվրոն, իսկ դրա պարագայում այն պարզապես կմարգինալացվի Եվրոպական ինտեգրման գործընթացից՝ հայտնվելով երկրորդ կարգի անդամ պետությունների շարքում։ Իսկ առանց Մեծ Բրիտանիայի՝ Գերմանիայի գերիշխանությունը ԵՄ-ում կդառնա ակնհայտ ու անվիճարկելի։ Բրիտանական ներկայությունն է ապահովում միության ներսում հավասարակշռությունը։

Այդ պատճառով Մեծ Բրիտանիան առաջարկում է «ավելի սերտ համագործակցություն եւ ավելի քիչ ինտեգրում» բանաձեւը, որը նշանակում է՝ Եվրոպական քաղաքականության ու ռազմավարության առանցքային ոլորտներում ազգային ինքնիշխանության սկզբունքի վերահաստատում: Մեծ հաշվով, ժամանակը ցույց տվեց, որ Լոնդոնի դիրքորոշումը ճիշտ էր՝ Եվրոյի գոտում չմիանալու հարցում:

Ամեն դեպքում, Եվրոպական միությունն այլեւս չի լինի այնպիսին, ինչպիսին այն պատկերացնում էին առաջ: Կարելի է ենթադրել, որ ԵՄ-ը փոխելու է ձեւաչափը: Նրա կորիզը կենտրոնակալու է Գերմանիայի շուրջ, մինչդեռ Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան վարելու են Բեռլինից ինքնուրույն քաղաքականություն: Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրները կազմելու են իրենց բլոկը, որի մեջ հնարավոր է մտնեն հետխորհրդային տարածքի արեւմտյան երկրները, ներառյալ՝ Հարավային Կովկասը:

Ներկայիս Եվրոպայի գերազանցությունն այլ քաղաքակրթությունների նկատմամբ, Ա.Թոյնբիի կարծիքով, ժամանակաշրջանի մարտահրավերներին համարժեքորեն պատասխանելու իր ընդունակության մեջ է: Այսօր Եվրոպան կանգնած է իրեն Վերագտնելու մարտահրավերի առջեւ ընդունակ է նա համարժեք պատասխանի:

## ԼԻԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

**Աեքսեյ Ֆենենկո – Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Միջազգային անվտանգության խնդիրների ինստիտուտի առաջատար գիտաշխատող**

Յոկտեմբերի 6-ին ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Անդրեյ Ֆոդ Ռասմուսենը Լիբիայի իրադարձություններն անվանեց անշրջելի: Յոկտեմբերի 11-ին ՆԱՏՕ ներկայացուցիչ Օանա Լունգեքսը հայտարարեց, որ դաշինքը կդադարեցնի «Միացյալ պաշտպան» գործողությունը, եթե Ազգային անցումային խորհուրդն (ԱԱԽ) ընդունակ լինի ապահովել լիբիացիների անվտանգությունը: ՆԱՏՕ-ն շարունակում է օդային հարվածներ հասցնել Սուլամար Քաղաքի դիմադրության ուժերի օջախներին: Սակայն Բյուլետենում գուգահեռաբար մշակում են «ներկայության» գործողությանն անցնելու տարրերակը. երկրում ոչ մեծաթիվ զինուժի տեղակայում, որի խնդիրն է լինելու օգնել ԱԱԽ-ին վերահսկողություն սահմանել լիբիական ողջ տարածքի վրա:

Լիբիական պատերազմի հետեւանքները, սակայն, դուրս են եկել Մուլամար Քաղաքի վարչակարգը տապալելու շրջանակներից: Այն միջերկրածովյան տարածաշրջանում ծեւավորել է նոր ռազմավարական իրավիճակ: Փոխվել է նաև Եվրոպական միության երկրների միջեւ հարաբերությունների համակարգը: ԵՄ ներսում երեւան են եկել նոր ենթաշինքներ, որոնք նկատելիորեն փոխել են նրա դիմագիծը:

**Առաջին.** պատերազմը ցույց տվեց Բրիտանիայի ու Ֆրանսիայի ռազմաքաղաքական ակտիվությունը: 1956թ. սուեզյան ճգնաժամից հետո այդ երկրները չեն նախաձեռնել խոչոր ռազմական գործողություններ: Լոնդոնը եւ Փարիզը նախընտրում էին գործել ԱԱԽ-ի հետ համատեղ՝ ՆԱՏՕ շրջանակներում (ինչպես 1999թ. կոսովյան պատերազմի ընթացքում) կամ ամերիկացիների հավանությամբ (ինչպես 1982թ. ֆուկլենդյան պատերազմի ընթացքում): Այժմ իրավիճակը փոխվել է: Ոչ թե Վաշինգտոնը, այլ Փարիզն ու Լոնդոնը հանդես եկան Քաղաքի վարչակարգի դեմ կամացանիայի նախաձեռնությամբ: Ֆրանկո-բրիտանական տանդեմը կրկին հավակնում է ՆԱՏՕ-ում ակտիվ դերակատարության:

Վերջին կես դարում Բրիտանիան ու Ֆրանսիան վերապերեցին գաղութային կայսրությունների փլուզման համախտանիշը: Բրիտանական ու Ֆրանսիական վերնախավերի կողմից նախակին գաղութներում պատերազմն ընկալվում էր միայն իրենց էքսպեդիցիոն ուժերի մասնակցության ձեւով՝ կողմերից մեկի հրավիրմամբ: 2010-ական թվականների սկզբին Բրիտանիան ու Ֆրանսիան կարծես շտկվեցին հետզաղութային համախտանիշից: Փարիզն ու Լոնդոնը, ինչպես 1940-ական թվականներին, առաջ են քաշում խոշոր ռազմաքաղաքական նախագծեր Աֆրիկայում եւ Մերձավոր Արեւելքում:

**Երկրորդ.** պատերազմն արգելափակեց ՆԱՏՕ-ից անկախ ԵՄ անվտանգության գոտու ստեղծման նախագիծը: 1980-ական թվականների վերջից Փարիզում ու Շոռմում քննարկվում էր հատուկ միջերկրածովյան տարածության ստեղծման գաղափարը: 1995թ. բարսելոնյան կոնֆերանսը գործարկեց հարավային եւ արեւելյան միջերկրածովյան տարածաշրջանների երկրների հետ ԵՄ համագործակցության գործընթացը: 2008թ. Ֆրանսիայի նախաձեռնությամբ հիմնվեց Միջերկրածովյան միությունը: Լիբիական պատերազմը, որն անցկացվում է ՆԱՏՕ ձեւաչափով, արգելափակեց այդ նախաձեռնությունները: Այն ապացուցեց, որ ԵՄ-ն առանց ԱՄՍ նաև ակտուական ընդունակ չէ պահպանել վերահսկողությունը սեփական անվտանգության գոտում:

1980-ական թվականների վերջից Փարիզը միջերկրածովյան տարածաշրջանի եւ, միաժամանակ, ՆԱՏՕ-ից ԵՄ անկախության նախագծերի առաջատարի կեցվածք ընդունեց: Լիբիական պատերազմի սկզբին Նիկոլա Սարկոզիի վարչակազմը փորձեց ապացուցել Ֆրանսիայի առաջատար դերը Միջերկրական ծովում: Իրականում Ելիսեյան պալատը Քաղաքիի վարչակարգը կարողացավ տապալել ՆԱՏՕ գործողության շրջանակներում: Վերջինս ենթադրում էր փոխգործակցություն ԱՄՍ-ի եւ Բրիտանիայի հետ՝ տերություններ, որոնք հանդես են եկել որպես ֆրանսիական միջերկրածովյան նախագծերի գլխավոր ընդդիմախոսներ: Ֆրանսիան, ըստ երեւույթին, ՆԱՏՕ-ից անկախ Միջերկրածովյան միության առաջատարի դերին չհաջող է առաջարկեց, ինչն, օբյեկտիվորեն, նվազեցնում է Փարիզի կշիռը ԵՄ-ում:

**Եղրորդ.** պատերազմը հաստատեց 2009թ. սկսած Ֆրանսիան ՆԱՏՕ ռազմական կազմակերպություն վերադարձնելու գործընթացը: Երկու տարի առաջ փորձագետները ենթադրում էին, թե Փարիզի ներկայությունը ՆԱՏՕ-ում կանրապնդի անվտանգության եւ պաշտպանության համաեվրոպական նախաձեռնության նախագիծը: Լիբիական գործողությունից հետո Ֆրանսիան հանդես եկավ ոչ թե որպես ԱՄՍ քննադատ, այլ իբրեւ

արտոնյալ դաշնակից: Ելիսեյան պալատն այլեւս անհրաժեշտություն չի համարում Ֆրանսիայի եւ նրա արտաքին քաղաքականության անկախությունը Վաշինգտոնից: Սարկոզիի վարչակազմն, ըստ եռթյան, հեռացել է 1960-ական թվականների կեսերից գերիշխող գոլիզմի հայեցակարգից:

**Չորրորդ.** պատերազմն ավարտեց ֆրանկո-բրիտանական արտոնյալ գործընկերության համակարգի ձեւավորումը: Սարկոզիի 2008թ. մարտի 26-ի Լոնդոն այցի ժամանակ կողմերը պայմանավորվեցին Երկրողմանի համագործակցության ձեւաչափի ընդայնման վերաբերյալ: 2010թ. նոյեմբերի 2-ին Բրիտանիան ու Ֆրանսիան ստորագրեցին պաշտպանության եւ անվտանգության ոլորտում 50 տարով համագործակցության մասին հոչակագիր: ՆԱՏՕ լիբիական գործողությունը, որն անցկացվեց Բրիտանիայի ու Ֆրանսիայի որոշիչ դերի ներքո, նախադեպ ստեղծեց այդ համաձայնագրերի գործնական իրականացման համար:

Այժմ Փարիզն ավելի սերտորեն համագործակցում է Լոնդոնի հետ, քան Բեռլինի: Բեռլինն էլ, իր հերթին, թիւ է պաշտպանում միջերկրածովյան տարածաշրջանի կամ ԵՄ ամրապնդման հարցերով Ֆրանսիայի նախաձեռնությունները:

**Չինգերորդ.** լիբիական պատերազմը դնում է Գերմանիայի ապագա քաղաքականության բնույթի հարցը: Բեռլինը հրաժարվեց մասնակցել ՆԱՏՕ ընդհանուր գործողությանը եւ չփորձեց այն տեղափոխել ԵՄ ձեւաչափ: Փորձագետները պնդում էին, թե 1995թ. բռնիական պատերազմից հետո Գերմանիան առաջին անգամ իրեն եվրոպական եւ նույնիսկ ատլանտյան համատեքստից դուրս դրեց: Սա, հավանաբար, չափազանցություն է: Սակայն գերմանական քաղաքականությունը դառնում է Փարիզից առավել անկախ ու ԵՄ-ից ավելի հեռու, որտեղ առաջատար դերն անցնում է ֆրանկո-բրիտանական տանդեմին: Գերմանիայում աճում են 1990թ. մոսկովյան պայմանագրով նախատեսված՝ անկախության սահմանափակումների մնացորդների վերացման օգտին տրամադրությունները:

**Վեցերորդ.** լիբիական կանգանիան անորոշ է թողնում Իտալիայի դերը: Հռոմը 1980-ականների վերջից ԵՄ միջերկրածովյան նախաձեռնություններում Փարիզի դաշնակիցն էր: Փարիզի նման, իտալական քաղաքական վերնախավը Միջերկրական ծովում ԵՄ պատասխանատվության հատուկ գոտու ստեղծման կողմնակից էր: Լիբիական գործողության սկիզբը Սիլվիո Բեռլուսկոնիի կարինետին միջերկրածովյան տարածաշրջանում ֆրանկո-իտալական տանդեմի առաջատար դերը հաստատելու հնարավորություն թվաց: Սակայն ֆրանկո-բրիտանական

գործընկերությունը Հռոմին երկրորդական դեր է հատկացնում: Հետեւանքը կարող են լինել իտալա-ամերիկյան փոխգործակցության հզորացումն ու ԵՄ-ում իտալիայի հաճակարգային դերի բարձրացումը:

Լիրիական պատերազմը հանգեցրեց ԱՄՆ դերի օբյեկտիվ բարձրացման: Վաշինգտոնին հաջողվեց արգելափակել իրեն ոչ շահավետ ԵՄ միջերկրածովյան նախաձեռնությունները: Վաշինգտոնը կարողացավ արժեզրկել Միջերկրածովյան միության՝ որպես ՆԱՏՕ-ից անկախ նախագիծ դերը: Վաշինգտոնը վերադարձավ Ֆրանսիայի հետ անվտանգության խնդիրներով փոխգործակցությանը: Բարաք Օբամայի վարչակազմը ողջունում է Փարիզի եւ Լոնդոնի գործընկերության հզորացումը: Սպիտակ տան հանար ֆրանկո-բրիտանական տանդեմի հիմքով ԵՄ-ը դիտվում է առավել զիջող, քան այնպիսի ԵՄ-ը, ուր առաջատար դերը պատկանում է Ֆրանսիային ու Գերմանիային: Լիրիական պատերազմն օգնեց Սպիտակ տանը արգելակել (հնարավոր է՝ նաեւ արգելափակել) ՆԱՏՕ դերը կրկնակող ԵՄ անվտանգության կառույցների զարգացումը:

Սակայն, միաժամանակ, լիրիական պատերազմը ԵՄ-ում ստեղծեց նոր բաժանարար գծեր: Նախորդ կես դարում ԵՄ-ը ֆրանկո-գերմանական նախագիծ էր. նրա հիմքում ընկած էր Գերմանիայի տնտեսական եւ Ֆրանսիայի ռազմաքաղաքական կարողությունների միավորումը: Բրիտանիան նման դասավորության մեջ դիտվում էր իրու ինքնուրույն տերություն, որը համաեվրոպական ինստիտուտներում լորբիացնում է ԱՄՆ շահերը: Առաջատար դերի անցումը ֆրանկո-բրիտանական տանդեմին ԵՄ-ն ինքնաբերաբար դարձնում է ավելի ատլանտյան, այսինքն՝ կապված ՆԱՏՕ մեխանիզմին եւ ամերիկյան ներկայությանը Եվրոպայում: Այս իրավիճակում մայոցանաքային Եվրոպայում ֆրանսիական քաղաքականությունից դժգոհության ներուժ է գոյանում:

ng.ru  
17.10.2011

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑ

<b>ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ . . . . .</b>	<b>1</b>
<b>Հայկ Գաբրիելյան</b>	
<b>ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ . . . . .</b>	<b>6</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b>	
<b>ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ . . . . .</b>	<b>17</b>
<b>Բենիամին Պողոսյան</b>	
<b>ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ . . . . .</b>	<b>23</b>
<b>Արտաշես Տեր-Հարությունյան</b>	
<b>ԱՄՆ ՀԱԿԱՀՐԹԻՈՎԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ . . . . .</b>	<b>27</b>
<b>Արաքս Փաշայան</b>	
<b>ՍԻՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ . . . . .</b>	<b>33</b>
<b>Սուրեն Սարյան</b>	
<b>ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՇԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՋ . . . . .</b>	<b>39</b>
<b>Ալեքսեյ Ֆենենկո</b>	
<b>ԼԻԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄՆ ՈՒ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ . . . . .</b>	<b>45</b>

**Ծաղիկին պատկերված է  
Դանդարերդը (Քարվածառ)**

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երևան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ O1U 000176:  
Տպագրվել է «Անարաս» տպարանում: